



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




4802

284  
4-79

Պոլիս  
1853

2010

2001



ԱՒԵ ՏԱՐԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ՈՒ

ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐՈՒՆ

ԿԱՐՃ-ԻՔՆԵՐԸ

ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԴԷՄ

*Տիգրան Կարճ*

ՏԵՏՐՈՒ



Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՐԵՊԵՆՆՅԱԿ

284  
—  
4-79





284  
4-79

uy


ԱԻԵՏԱՐԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ՈՒ

ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԿԱՐՃԻՔՆԵՐԸ

ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԴԵՄ

Տ Ե Տ Բ Բ



ՀՐԱՄԱՆԱԻ

ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐԳԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Տ. ՅԱԿՈԲԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԱՊԵԱՆՅ

ՄՈՒՍՏԱՖԱ ՓԱՇԱ ԽԱՆԸ  
ՉԱՔՄԱՔՃԸԼԱՐ ԵՕՔՈՒՇԻ

— 1853 —

23205

THE UNIVERSITY OF CHICAGO

11

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

23205

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

298

39

THE UNIVERSITY OF CHICAGO

1823

## ԿԼ. ՆԻՍԵՆՆԵՍԻՍԻՍԻՍ

«Եւ երկրորդ թուղթը կ'գրեմ ձեզի սի-  
 րելիներ, որով ձեր հաստատ միտքը կ'արթըն-  
 ցունեմ յիշելու, որ միտքերնիդ բերեք սուրբ  
 Մարգարեներէն, ու ձեր Առաքեալներէն ա-  
 ղաջուց ըսուած խօսքերը՝ Տէրօջը ու Փրկչին  
 պատուէրները, » (Բ. Պեփ. 3. 1-2) Թէ  
 «Գնացէք այսու հետեւ, աշակերտեցէք զամենայն  
 հեթանոսս, մկրտեցէք զնոսս յանուն Հօր՝ և  
 Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. » (Մատթ. 28. 19)  
 Չ'է թէ ան դիտաւորու թեամբ որ իբր թէ կոր-  
 սուած կամ անգործածելի մնացած ըլլալով այս  
 սրբազան խորհուրդը յերեւան և ՚ի յայանու թիւն  
 հանեցք, կամ գործի դնելու համոզեցք մեր Հա-  
 մազգի եղբայրները. այլ թէ՛ ինչ կերպով ինչ  
 նպատակաւ և ինչ հաւասարով պէտք է ըլլալ և  
 կ'ըլլայ ասիկայ Հայկազեան Լուսաւորչեբամ Հօ-  
 տին մէջ, և ինչ տարբեր դիտաւորու թք գործի  
 կ'գրուի ինքիրզինքին Աւետարանական կոչող  
 Նորահաւաններէն, որոնք մեզնէ տարբերելն  
 զաս իրարմէ ալ կ'տարբերին:

Ստոյգ է որ՝ բոլոր Բրիտանեաց անունը  
 կրողները (ի բաց առնելով Բողոքողք), ամենքն  
 ալ մի և նոյն նպատակաւ ու դիտաւորու թեամբ  
 կ'կատարեն սա սքանչելի սուրբ խորհուրդը, և  
 կ'միաբանին ան նոյն անեղծանելի և անհակա-  
 դակելի ճշմարտութեանը՝ որ ամէն Բրիտանոսին  
 եղողները պէտք է ունենան ասիկայ իրենց ան-  
 ձերուն ու սիրտերուն վրայ, ո՛չ միայն ՚ի հնա-  
 զանգութիւն և ՚ի պատիւ պատուիրանին՝ ինչ

պէս որ Բողոքականները կ'ըսեն, այլ և յորդէգ-  
 րութիւն Տեառն մերոյ և ՚ի Թողութիւն մեղաց  
 սկզբնականաց և ներդործականաց, նախ քան ըզ-  
 մկրտութիւնն գործելոց: Այսին որոյ՝ պէտք էր  
 ըլլար մեզի գիտնալ յառաջ բերել և քննել  
 ամէն քրիստոնեայ կոչուող ազգերուն ինչ յոյ-  
 սով և դիտաւորութեամբ ասիկայ գործի դնել  
 նին. բայց պէտք ու հարկ էր մեզի գիտնալ ու  
 քանի մը խօսք խօսիլ մեր յոյսին վրայ անոնց  
 դէմ որ կ'ուզեն խախտել, անարգել և առ ոչինչ  
 գրել նաև մեր հաւատքը: Ասոր համար՝ կրս-  
 կսինք խօսելու աս մեզի պարտք ճանչցած նիւ-  
 Թերնուս վրայօք. բայց որովհետև անոր անհրա-  
 ժեշտ հարկաւորութեանը վրայօք իբր Թէ միա-  
 բան ենք, մենք ալ միշտ հրաժեշտ տալով խոյս  
 պիտի տանք անհարկաւոր խնդիրներու և եզրա-  
 կացութիւններու ու խոտելի և ձանձրալի զրա-  
 բանութիւններու մէջ մտնալէն. ընդ հակառակն՝  
 միշտ լայն խօսելով, և Թէ որ հնար ըլլայ կրկ-  
 նութիւններ և ս ընելով պիտի ճառենք ան բա-  
 ները որոնց վրայօք խօսիլ որոշեցինք: Այլ Թէ-  
 պէտ շատ մեծ ամօթ համարելու է ասիկայ  
 գիտնականներուն առջև՝ իսկ ինձի փառք կը  
 համարուի որ ստակական ու ռամկական դասուն  
 համար գրելովս հարկ իսկ կ'ըլլայ վերակրկնու-  
 Թիւններ ընել աղեկ հասկըցրելու համար. և  
 աս ընդլայնեալ կրկնութիւնները ան բաներուն  
 վրայօք պիտի ըլլան՝ որ տարակուսութեան տակ  
 կ'ձգեն յուսացուած բաներուն հաստատու-  
 Թիւնը. որոց վրայ պիտի յաւելցրնենք նաև  
 մեր աս գործին նպատակին համեմատ քանիմը

սարքեր և մէկզմէկու հակառակ կարծիքներ՝ որ  
 ընդունուած են զանազան Բողոքականներէ , ու  
 բոնցմով գրեթէ մեր դաւանութեանը Աւետա-  
 րանական ճշմարտութիւն ըլլալը յայտնուելէն  
 ետքը՝ ուղղագատ ընթերցողս յայտնի պիտի կըր-  
 նայ տեսնել թէ որո՞ւնը ճշմարտութիւն է և ու-  
 րո՞ւնը ստութիւն : « Լսիկայ ձեզի գրեցի՝ որ  
 » մեկը ձեզ չ'մոլորցրնէ . » և չ'է թէ « իբր  
 » թէ ճշմարտութիւնը չ'էք գիտեր . հապա թէ  
 » գիտէք անիկայ , ու նաև՝ բոլոր ստութիւնը  
 » ճշմարտութենէ չ'է : » (Ա . Յովն . 2 . 28 . 21) .  
 միայն Անոր խօսքերուն մէջ է ճշմարտութիւնը ,  
 բուն իսկ որ խօսքը ճշմարտութիւն ըլլալով .  
 (Սաղմ . 118 . 116 . Յովն . 17 . 17) . և կատար-  
 եալ ըլլալով « Հոգին կ'նորոգէ . . . Տղաքը  
 » իմաստուն կ'ընէ : . . . Տէրոջը պատուիրանք-  
 » ները լոյս են , և լոյս կուտան աչքերուն : »  
 (Սաղմ . 18 . 7—8) . Լսոր համար՝ պարտինք  
 միայն Աստուծոյ խօսքին հաւատալ և հանա-  
 պազ զայն միայն քննել . (Յովն . 5 . 39) . և չը  
 հաւատանք ամեն հոգիներու . հապա՝ ընտրեմք  
 հոգիները՝ թէ Աստուծմէ՞ մի են . (Ա . Յովն .  
 4 . 1 . ) և « Երանի՛ (անոնց)՝ որոնք կ'քննեն  
 » Անոր վկայութիւնները , (որոնք) իրենց բոլոր  
 » սրտովը կ'իսնդրէն զԱնիկայ : » (Սաղմ . 118 .  
 2 . ) Ար բարեգործներ ըլլալով անխելք մարդոց  
 սգխտութիւնը պապանձեցնելու պիտի կարողա-  
 նան , որ « Աստուծոյ կամքը ասանկ է : » (Ա .  
 Պետ . 2 . 15 . ) Արով « Ամբարտաւաններուն  
 » ստքերը մեր վրայ չ'գան , և մեղաւորներուն  
 » ձեռքերը մեզ չ'ողոցնեն : » (Սաղմ . 35 . 12 . )





դիվան, ճանաչանա շահանք զհամարիցս ի  
մանս արդեմ սա միլիանն յա մէջն զմն  
յա միլիոն զմն, զյոճմիլիոնի մարմն շտափ  
ուստոյն ի' սա զճանաչար յարդար զճ զս ճի

**Մ**արտէն՝ սա յայտնի և ստոյգ բան  
մըն է որ Մկրտում թեան Սուրբ Խորհուր-  
դին վրայօք քանի մը դարերէ ՚ի վեր էր  
զանազան կարծիքներ և կերպ կերպ մէկ-  
նու թիւններ կ' հրատարակուէր ինքիրզինք-  
նին Աւետարանական (1) կոչող խումբ մը  
մարդիկներու մէջ . և առ ալ մեծ ճշմար-  
տութիւն մըն է որ ասանկ մոլորական հեղի-  
նակութիւններէ սղատ և անբաժին էր  
աս մեր բնակած երկիրը՝ կէս դարու չափ

---

(1) Աս «Աւետարանական» անունը բողոքովին անպատշաճ  
սեպած են մեզի նոյն ազանգաւորները . մեզի կ'ըսեմ,  
Հայաստանեայց հարազատ ճննդոցս . և փոխանակ ասանկ  
անմահական անուան մը՝ իբրև անարգական և վատիմաստ  
մականուն մը՝ «ՄԱՇՏՈՅԱԿԱՆ» անունը կուտանու  
Աս մականունը՝ գրեթէ բոլոր Լուտերականներէն (ա-  
սանկ ըսելու իրաւունք ունիմ,) ՚ի բերան լսած ունէ-  
ինք , և այս օրերս յատկապէս նամակ մը ընկալանք ա-  
նոնցմէ մէկէն, որուն մէջ գիտմամբ երկու տեղ առ ա-  
նունը կուտար: Իսկ ես՝ իբրև պատուանուն ընկալայչ՝ է  
Թէ միայն ասիկայ, այլ և՛ մեր Հայրապետներուն անուն-  
ները ըլլալով ինչ որ ըլլայ: Քանզի «Մաշտոց» բառը  
իրանցընէ գիրքի մը անուն է, բայց ան գիրքին պէս գիրք  
մ'ալ Յունարենին մէջ ըլլալով Յոյները անոր «Էվխո-

առաջները . բայց որովհետև Քրիստոսի  
 Հովուապետին հօան ենք՝ իր երկրպագե-  
 լի արիւնովը ծախու առնուած , հարկ էր  
 մեր մէջն ալ մտնային աս մոլար անուն  
 գիտութեան հեղինակները , մեր երկիրն ալ  
 պէտք էր հաղորդ գտնուէր աս ՚ի կորուստ  
 շահեցող դժոխային վարդապետութիւննե-  
 րուն , և անոնցմէ մասն ու բաժին ունե-  
 նարօ Վասն զի՝ պէտք էր կատարուիլ  
 Քրիստոսի մարգարէութիւնը՝ որ կ'ըսէ .  
 « Ըստ սուտ մարգարէներ պիտի ելլեն , ու  
 » շատերը պիտի մոլորցընեն . » (Մատթ .  
 24 . 11 . ) և Պօղոսի զրուցածը . « Գիտեմ  
 » ես՝ որ իմ զատուելէս ետքը յափշտա-

լօյիօն » անունը կուտան , և իրենք Էվիսօլօիանական չ'են  
 կոչուիր . պատճառը որ Հայերէնը Մաշտոց կ'կոչուի ,  
 աս անունով մեր նախնի երկու սուրբ Վարդապետներ-  
 նուս մէկը ան գիրքին Հայերէնը յօրինած ըլլալով՝ իր  
 անունովը կոչուէր է իւր գործը : Եւ թէ՛ որ մեզ  
 « Մաշտոցական » կ'կոչեն նէ՛ ըսել կ'ըլլայ՝ որ մենք աս  
 անունը կրող Վարդապետներէն մէկուն կամ միւսին  
 (Թեպէտ երկուքին ալ ) ունեցած հաւատոյ գաւանդու-  
 թեանը հետեոյներն ենք , ինչպէս որ Լուտերական ալ  
 ըսելով Լուտերի գաւանդութեանը հետեոյ ըսել կ'ըլլայ .  
 բայց աս մականունը մեզի տուողները բնաւ միտք ալ  
 բերած չ'են՝ որ Մաշտոցական ըսուելով՝ Աւետարա-  
 նական չ'ենք ըսել չ'ըլլար . թէև Մաշտոց վարդապետին  
 հետեոյ ըսել ըլլայ աս խօսքը , ինտո՛ր որ Հայ՝ կամ  
 Արամեան ըսուելով՝ Աւետարանական չ'ենք ըսել  
 չ'ըլլար :



7) Կող դայլեր պիտի գան, որ հօտին չ'պի-  
 7) տի խնայենս Նա ձեզմէ ալ անանկ մար-  
 7) դիկ պիտի ելլեն՝ որ ծուռումուռ բա-  
 7) ներ պիտի խօսին, աշակերտները իրենց  
 7) ետեւէն քաշելու:» (Գործ. 20. 29-30.)

Աւստի՝ մեր սիրելի Ազգակից եղբայր-  
 ները Քրիստոսի Տեառն մերոյ տուած յոյ-  
 սին վրայ հաստատելու համար, թէ «Ան  
 որ մինչև վերջը համբերէ՝ անիկայ պիտի ապ-  
 րի. » (Մատթ. 24. 13.) կ'սկսինք հիմա  
 ան այլակրօններէն ոմանց մէկ քանի կար-  
 ծիքները՝ որ Աւետարանին հակառակ են,  
 մեջ բերելով խորհրդածութիւն մը ընելու,  
 և իրենց առարկութիւններուն երևելիներէն  
 մէկ քանիին պատասխանները աստեղը տա-  
 լու. և որպէս զի մեր նպատակին աւելի ա-  
 պահովութիւն հասնինք՝ Մարտինոս լուտերի  
 Քրիստոնէականէն քաղուած յօդուած մը  
 մեզի յարմար բնաբան կ'ընտրենք, յօդ-  
 ուած մը՝ որուն Հայերէնը թարգմանելով  
 իրենց գործածած հաւատոյ դաւանուէց  
 հաւսքման գրքոյկին մէջ դնողը Բողոքա-  
 կաններէն մէկը չ'ըլլար, և ան գրքոյկն ալ  
 իրէնց տպարանէն ելած չ'ըլլար, բնաւ և ա-  
 մենեւին հաւատալիք չ'ունէի որ ասանկ դա-  
 ւանուի մը ընդունելի եղած է ան Ժողովրդ-  
 եան բաւական մեծ մասը կազմող անդամ

ներուն. վասն զի ան նոյն էութիւնը ունի իր  
մէջը՝ ինչ որ կ'հաւատայ Հայաստանեայց  
սուրբ Եկեղեցին. և միայն աս քանն է որ  
մեզի կարծիք կուտայ թէ՛ լուտեր աս ՚ի  
յամօթ և ՚ի նախատինս իր աշակերտացը  
հրատարակեր է աս իր քրիստոնէական  
դաւանութիւնը, որն որ եօթը հարցմունք  
ներու և պատասխաններու վրայ շինուած  
ըլլալով՝ մենք կտոր կտոր պիտի զատենք  
և անանկ դնենք աս տեղ, վրան մեր կար-  
ծիքները յաւելցնելու համար:

1. | Լուտեր: « Հարց. Ի՞նչ է Մկրտու-  
թիւնը:

« Պատասխան. Մկրտութիւնը պարզա-  
պէս ջուր չ'է. այլ ջուր՝ Աստուածային հը-  
րամանովը բռնուած և Աստուծոյ խօս-  
քովը կնքուած: » (Երեւ. 26.)

Ինչպէս որ կ'տեսնուի աս խօսքերուն  
մէջ՝ հեղինակը մէկ անհուն զօրութիւն  
մը կուտայ Մկրտութեան ջուրին՝ մեծաւ  
ճշմարտութեամբ: Իսոյց ասոր հակառակ՝  
իր կրօնակիցներէն մէկը քանի մը առար-  
կութիւններ կ'ընէ:

Ա. « Ծրով մարմինը լուարը ինչպէս  
կրնայ հոգին մաքրել: » (Ինչպիսիւն « Ազ-

„նուական հին բերիացիներուն հետևող  
անուանող Բողոքականին շինած մկրտու-  
թեան և վերստին ծննդեան ճառին մէջ.  
երես. 32).

Ասոր պարզ հարցմունք մը ընելը՝ պա-  
տասխանի տեղ կ'ծառայէ, վասն զի պա-  
տասխանը իր մէջը կ'ամփոփէ. Յորդանա-  
նի ջուրը ի՞նչ ջուր էր, ի՞նչ զօրութիւն  
ունէր որ կարենար մարմնոյ մը բորոտու-  
թիւնը սրբել. որուն մէջ «Գնա՛ եօթն ան-  
» գամ լուացուէ՛» ըսաւ Եղիակ Նեեման  
Ասորոց իշխանին, «և (մատաղ մանկան  
մարմինի) պիտի դառնայ քու մարմինդ ու  
» պիտի սրբուիս. » (դ. Թագ. 5. 10.)  
Չէ՞ որ Մկրտութեան ջուրին վրայ թերէ-  
հաւատութեամբ նայողներուն և մեր ա-  
նոր վրայ ունեցած հաւատքնուս դէմ դառ-  
նացողներուն պէս «Նեեման բարկացաւ,  
» գնաց ու կ'ըսէ. ես կ'ըսէի դուցէ՛ իմ գո-  
» վըս կուգայ, աղօթք կ'ընէ ու իր Աստու-  
» ծոյ Անունը կ'կարգայ. և ձեռքը (փորո-  
» տած) մարմինիս վրայ կ'դնէ, ու կ'բժշկէ  
» իմ բորոտութիւնս. Իսրայէլի (երկրին)  
» բոլոր ջուրերէն աւելի աղէկ չ'են Դա-  
» մասկոսի Նաթանա և Փարփարա գետե-  
» ըր. և ինչո՞ւ չ'երթամ ու անոնց մէջ  
» լուացուիմ. . . » (Անդ. համար. 11-12.)

Բայց երբ որ ետքը իր ծառաներուն խօսքը մտիկ ըրաւ . « ու իջաւ Նեեման՝ ու » Յորդանանի մէջ Նդիսէի խօսքին պէս » եօթն անգամ մկրտուեցաւ . անոր մարմինն ալ մատաղ տղու մը մարմնինի պէս » եղաւ՝ ու սրբուեցաւ . » ( Հաճար . 14 . ) » Գարձեալ, Սելուլամի ջուրը ինչ զօրութիւն ունէր , որ Քրիստոս ՚ի ծնէ կոյրը բժշկելու համար թուքովը կաւ շինելով անոր աչուրները ծեփելէն ետքը՝ ( Յով . 9 . 1-6 . նաև 11 . ) խրկեց Սելուլամ որ լուացուի . ( Հաճար . 7 . 11 . ) և երբ որ դնաց անիկայ ու լուացուեցաւ՝ տեսաւ . ( Հաճար 7 . 11 . նաև 15 . ) չէր մի կարող Քրիստոս՝ ոչ թուքով շինուած կաւով անոր աչուրները ծեփելով , ոչ ալ Սելուլամի ջուրով լուացուել հրամայելով՝ զանի բժշկելու . անշուշտ . բայց ինչու ասանկ ըրաւ . վասն զի անանկ ուղեց :

Արդ՝ չ'երկարելով խօսքը ասանկ թերեհաւատական խօսքեր զրուցողին միտքը կ'ձգեմ հիմայ անհաւատ ծառաներուն Նեեմանին զրուցած խօսքերնին . « Թէ որ » մարդարէն քեզի հետ մեծ բան մը խօսած » ( ալ ) էր , ոչ ապաքէն պարտք էր ( քեզի » զի անոր ըսածը ) ընել . թող որ ըսաւ՝ » լուացուէ՛ ու պիտի սրբուիս : » ( Դ . Թագ .

5.13. ) Չէ որ Բրիտանոս Տէրն մեր ալ  
 ըսած է . « Որ հաւատայ և մկրտիցի՝ կեց-  
 ցէ . . . » (Մարի . 16 . 16 . ) ոչ ապաքէն  
 պարտք է մեզի մկրտուիլ , թող թէ ըսուե-  
 ցաւ . « Ապաշաւեցէք , և մկրտեցի իւրա-  
 յքանչիւրոք ՚ի ձէնջ յանուն Տեառն Յի-  
 սուսի Բրիտանոսի ՚ի թողութիւն մեղաց ,  
 » և ընկալջիք զաւետիա Հոգւոյն Սրբոյ : »  
 (Գործ . 2 . 38 :

Ղարձեալ կ'առարկէ .

բ . « Ի՞նչ զօրութիւն ունի անիկայ  
 » (այսինքն , մկրտութեան ջուրը) սիրտը նո-  
 յրոգելու : » (նոյն 32 երեսը . )

Եւ ալ կրկին կ'հարցնեմ , ի՞նչ զօրու-  
 թիւն ունէր Մովսէսին շինած պղնձէ օձը ,  
 որ ձողի մը վրայ դնելով օձերէն խայթ-  
 ուած խորայելացիները անոր նայելուն պէս  
 կ'առողջանային . ( Թուոց . 21 . 9-9 . ) նոյն-  
 պէս , ի՞նչ զօրութիւն ունէր Եղիայի մաշ-  
 կեակը որ Եղիսէի վրան ձգելուն իր մար-  
 գարէական ոգին անոր վրայ իջաւ : ( Դ .  
 Թագ . 2 . 9-15 . )

Ղարձեալ կ'ըսէ .

գ . « Հաւանական կ'երևնայ թէ Սուրբ  
 » Հոգին ասանկ միջոց մը ընտրէ սրտի փո-  
 » փոխութեան գործը կատարելու համար :  
 » ( Հոն , 32 երեսին Տեղ : )

Մ. յո՛ « Հաւանական » չ'երևնար ա-  
նոնց՝ որ իրենց տրուած միայն յայտնի  
բաներու վրայ խորհելու տեղ՝ Աստուծոյ  
պահուած գաղտնիքներուն վրայ ալ քնն-  
նութիւն ընելու կ' յանդգնին թէ ասիկայ  
ասանկ կրնայ մի ըլլալ, կամ հնարաւոր է .  
և հաւանական կ'երևնայ . թէպէտ և կ'ար-  
գիլուի աս բանս . « Ճաճուկքն Տեառն Աս-  
տուծոյ մերում, և յայտնիքն մեզ և որդ-  
ւոց մերոց յաւիտեան . . . » (բ . Օրի՛ն :  
29 . 29 . ) որուն նայելով Սիրաք ալ կ'ըսէ .  
« Ո՛ր մէծ է քան զքեզ , զայն մի քննել .  
այլ որ ինչ հրամայեցաւ քեզ՝ զայն խորհ-  
եաց : » (Սիրաք , 3 . 22 . ) Իսկ Անոր Խօսքը  
ու Պատուիրանը վերկութեան հարկաւոր  
ճանչցողներուն համար՝ ՍՏՈՅԳ մեր ըսա-  
ծին պէս ըլլալը կ'երևնայ :

Թէ որ Աստուծոյ խօսքը չ'ըլլար ան  
պղնձէ օձին վրայ՝ որ վերը զըուցեցինք ,  
իրանցնէ չ'էր կրնար մարդ բժշկել . և թէ  
որ Աստուծոյ կամեցողութիւնը չ'ըլլար  
Եղիսէի խնդիրքին մէջ , և Եղիայի բերնովը  
պայման մը դրած չ'ըլլար անոր հետ ,  
(Տե՛ս ՚ի Դ . Թագ . 2 . 9 . ) Եղիայի մաշկեա-  
կը անոր վրայ իջնալուն իր Հոգին ալ ա-  
նոր վրայ չ'պիտի իջնար : Ասանկ ալ թէ  
որ Աստուծոյ կամքը ու մեզի դրած պայ-

մանք չ'ըլլար, թէ Առանց մկրտութեան  
 չ'ենք կրնար վերկուիլ, (Մարի . 16 . 16 . )  
 շնոր էր որ ջուրը ասանկ մեծ գործողու-  
 թիւն մը ընէր. բայց աւելնալով անոր վը-  
 րայ Աստուծոյ բանը՝ Պատուէրը և Անու-  
 նը՝ հնարաւոր կ'ըլլայ. թէպէտ և աս գոր-  
 ծողութիւնը ընողը Աստուածային կամեցո-  
 ղութիւնը ըլլայ: 'Չ'է որ մեր պարտքն է  
 Պատուիրանին միայն լսող ըլլալ, և կատա-  
 րող. կրնայ մէկ մարդ մը՝ որ դէպ 'ի մե-  
 կուն ունեցած պարտքը չ'տուած ազատի-  
 իր պարտքերէն: Ասանկ ալ մահկանաց-  
 ուացս աս Աստուած ունեցած պարտքեր-  
 նիս չ'կատարած, ո՞վ կ'ըսէ թէ իրէն դէմ  
 (մեղօք) ըրած պարտքերնիս կ'սրբուին:

Հիմա աս տեղ՝ 'ի սկզբան բանիցս աս  
 քրիստոնէական առաջին պարտքերնուս վը-  
 րայօք խօսիլ ուղելով կարճառօտաբար,  
 սուրբ Գիրքը ձեռքերնիս առնելով՝ վկա-  
 յութիւններու ահագին բազմութիւն մը  
 կ'գտնանք սա հետեւեալ խօսքերուն պէս.  
 զորոնք որ խարդախ ոմանք իրենց բերան-  
 նուն մեջ գործիք ըրած՝ չ'են դադարի  
 թորգոմական տանը զաւկրնելը քարկոծե-  
 լէն. (2)

(2) Վ'ազաչէնք նոյն Ազնուականներուն որ զմեզ թորգո-  
 մական զաւակ անուանելնուս համար չ'հասնան թէ  
 Աւետարանի աշակերտներ չ'ենք ըսել կ'ուզէնք:

«Ղշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի ,  
 «Թէ Ան որ ինձի կ'հաւատայ՝ յաւիտե-  
 «նական կեանքը կ'ընդունի . . . Ան որ  
 «ինձի կ'հաւատայ , մեռնի ալ նէ՝ չիտի  
 «ապրի . Եւ ան ամենը որ կենդանի է՝ ու  
 «ինձի կ'հաւատայ , յաւիտեան չ'պիտի  
 «մեռնի » (Յովհ . 6 . 47 : Լ 11 . 25 , 26 :

Ասանկ և ասոնց պէս խօսքեր՝ ինչպէս  
 որ ըսինք խիստ շատ կ'գտնուին սուրբ Գր-  
 ըոց մէջ . որոնք մեզի կ'հասկցունեն որ մի-  
 այն հաւատալը բաւական է մեր փրկու-  
 թեանը համար . բայց բանը ան է՝ որ  
 ինչպէս հաւատալը գիտնանք . կամ պար-  
 տիմք սորմիյ՝ Թէ

Ի՞նչ է Քրիստոսի հաւատալը .

Քրիստոսի հաւատալը՝ Ապաշխարելով  
 և Աւետարանի վարդապետութեանը հա-  
 ւատալով կ'ըլլայ , (Մատի . 1 . 15 . ) Իրեն  
 աշակերտ ըլլալով ու իր խօսքը պահելով .  
 (Յովհ . 8 . 31 - 32) Թէ որ միայն հաւա-  
 տալու ենք որ Յիսուսը Քրիստոս է , Ասա-  
 ուած և մարդ կատարեալ , և այլն . և այլն  
 և այլն . զարձեալ հաւատալու ենք՝ որ աս  
 սոսկ հաւատքը մեռեալ և սատանայական  
 հաւատք է : Քանզի Սատանան ինքն ալ  
 գիտէ որ աս ասանկ է . ինտոր որ տեղ  
 տեղ խոստովանեցաւ . « () ի՞ կայ՝ իմ և



"Քո՛ Յիսուս Որդի՛ Աստուծոյ Բարձրելոյ ,  
 "աղաչեմ՝ զՔեզ մի՛ տանջէր զիս : " Ղուկ .  
 . 8 . 28 . ) "Թո՛ղ տուր , զի՞ կայ՝ մեր և  
 "Քո՛ Յիսուս Նազովրեցի , եկիր կո-  
 "րուսանել զմեզ . զիտե՛մք զՔեզ՝ ո՛վ ես  
 "Սուրբն Աստուծոյ . " (Մարի . 1 . 24 . )  
 "Զի՞ կայ մեր և Քո՛ Յիսուս Որդի՛ Աս-  
 "տուծոյ , եկիր տարաժամ տանջել զմեզ :  
 " (Մարի . 8 . 29 . ) Թե՛ որ Սատանան աս  
 հաւատքովս իր առջի փառքին դարձաւ ,  
 մենք ալ սոսկ աս հաւատքը ունենալով  
 կրնանք փրկուիլ . և ան կ'ըլլայ Քրիստո-  
 սի մեզմէ պահանջած հաւատքը . եթէ չը-  
 փրկուեցաւ Սատանան՝ ուրեմն մեր փրկե-  
 տրուածնալ աս չ'է :

Քրիստոս՝ մեր Տէրը կ'ըսէ .

"Թե՛ որ դուք իմ խօսքիս մէջ կենաք՝  
 "ճշմարիտ աշակերտներս էք . և ճշմարտու-  
 "թիւնը պիտի գիտնաք , ու ան ճշմարտու-  
 "թիւնը ձեզ պիտի ազատէ : . . . Ճշմարիտ  
 "Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի , Թե՛ որ մէկը  
 "Իմ խօսքս պահէ , յաւիտեան մահ չ'պի-  
 "տի տեսնէ : . . . Թե՛ որ մէկը իմ խօսքս  
 "պահէ , մեռնելու մահը յաւիտեան չ'պիտի  
 "առնէ : Յովն . 8 . 31 - 32, 51 - 52 . )

Ահա՛ աս խօքերն ալ՝ յայտնի կերպով  
 կ'հասկցնեն հաւատքին ինչ ըլլալը .

«Ա՛ն որ ինձի կ'հաւատայ, . . . պիտի  
 ապրի» ըսելը ինչ ըսել է նէ՝ «Թէ որ մէ-  
 »կը իմ խօսքս պահէ, մեռնելու համը  
 »յաւիտեան չ'պիտի առնէ» խօսքն ալ ան  
 ըսել է. Յիսուսը միայն բերնով Քրիստոս  
 Աստուած դաւանելով Արքայութիւնը  
 չ'առնուիր, «Ձի ոչ եթէ բանիւք է  
 »Արքայութիւն Աստուծոյ, . . . (Ա. Վրն.  
 4. 20.)

«Բանին ընողները եղէք, — կ'ըսէ Առաք  
 «եալը — և չ'է թէ միայն լսողներ սեպէք  
 »ձեր անձերը:»

«Վ ասն զի՝ թէ որ մէկը միայն լսող  
 »ըլլայ Բանին ու կատարող չ'ըլլայ, անիւ-  
 »կայ (ան) մարդուն կ'նմանի՝ որ ապշած  
 »իր երեսը նայի՝ որ հայելիին մէջը կ'երև-  
 »նայ: . . . Բայց (ան) որ ազատութեան  
 »կատարեալ օրէնքին . . . մէջը որ կե-  
 »նայ՝ լսող (ու) մոռցող չ'ըլլար, հապա  
 »ԳՈՐԾԻԸ ԸՆՕՂ, (որ) ինքը՝ ընելովը  
 »երանելի կ'ըլլայ:» (Յճ. 22 = 25.)  
 Ուրեմն Քրիստոսի հաւատալը՝ իր բանին  
 հպատակելով և կատարելով կ'ըլլայ: Ա՛ս  
 է Քրիստոսի վրայ եղած կենդանի հա-  
 լատքը:

Մեր Տերոջը յարութիւն առնելէն ետ  
 քը ըրած վերջին կտակին մեջ ալ՝ աս սոյն

միտքը կ'դռնենք . «Երթայք յաշխարհ  
 յամենայն , և քարոզեցէք զԱւետարանն  
 յամենայն արարածոց : Որ հաւատայ և  
 յմկրտիցի՝ կեցցէ . » (Մարի . 16 . 15 - 16 . )  
 Որպէս թէ ըսէր , « Ո՛վ որ հաւատայ՝ և  
 իր հաւատքին գործը ընելու սկսի՝ փրկուի »  
 և աս հաւատքին առաջին գործը « Ի  
 թողութիւն մեղաց մկրտուելը » ըլլալով  
 հաւատայէն անմիջապէս ետքը կ'յարէ ,  
 « և մկրտիցի՝ կեցցէ . » տյսինքն « մկրտու-  
 թիւնը քրիստոս դրաւ , որ ո՛վ որ հաւա-  
 տալով մկրտուի նէ՝ պիտի փրկուի » ըսե-  
 լով մկրտուինք նէ՝ անշուշտ կը փրկուինք :  
 Մեծ ամբարշտութիւն մը կ'ըլլայ չ'ըն-  
 դունիլը և անհաւատութեամբ , նմանա-  
 պէս մեծ ամբարշտութիւն մը կ'ըլլայ զա-  
 նիկայ Իր մեղի սորվեցուցածէն տարբեր  
 դիտաւորութեամբ գործի դնելը . ի թողու-  
 թիւն մեղաց գործի չ'դնելը կ'ըսեմ :  
 Ինքը ըսաւ՝ որ հաւատայէն ետքը մկր-  
 տուողը պիտի փրկուի . և ճիշդ ասանկ միտք  
 առեր էին Առաքեալներն ալ որ Հրէանե-  
 ըր և ուրիշները երբ որ իրենց հարցուցին  
 թէ « Ի՞նչ ընենք՝ մարդիկ եղբայրներ ,  
 » ըսաւ անոնց Պետրոս . Ապաշխարեցէք ,  
 » և ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի մեր  
 » Տէր Յիսուսի քրիստոսի Անունովը՝

ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ , Ե  
 ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԱՒԵՏԻՍԸ ՊԻՏԻ  
 ԸՆԴՈՒՆԻՔ : ” (Գործ . 20 . 27 — 38)

Ըստ խօսքերը թէ որ կ'իմացնեն մեզի՝  
 որ փրկութեան համար Աստուծոյն ու  
 մկրտուիլ պէտք է , կ'հետեւցնենք ուրեմն  
 որ Աստուած մեր բոլոր մեղքերնուս մեզի  
 սրբելու համար պայման մը , ուխտ մը և  
 անանցանելի դաշինք մը դրէր է որ մենք  
 ընդունինք նէ սրբէ . և ինքն Աստուած՝  
 ասանկ պայման մը դրէր է նէ՝ մոլեղնա-  
 բար «Փրկութեան համար մկրտութեան  
 »ապաւինողները . . . պիտի կորսուին»  
 (3)ըսելը ամբարշտական հայհոյութիւն մը և

(5) «Գուրթուլուչ իշիւն վաթթիգէ կիւմէնէնկեր նէ՝  
 »օլաճագլար» :

«Ղայս օլաճագլար» , կ'ըսէ՝ (Քիլիսէ իւզերինէ Քը-  
 րիսթիան Թալիմաթը քիթապընա Ի՛լավէ անուն տեա-  
 րին մէջ , երես 44 . նոյնպէս , Երկրորդ ասիս Քրիստո-  
 նէական վարդապետութեան մէջ , երես 55 7) . և  
 այս «Ղայս օլաճագլար» խօսքին քով՝ Պօղոսի առ  
 Փիլիպպէցիս գրած Թուղթին 4 . 4 — 9 Թուահամարները  
 կ'գնէ՝ առանց խօսքը դնելու . որպէս թէ ցուցնէ՝ որ  
 իր խօսքը սուրբ գիրքէն է : Բայց թէ որ սուրբ գիր-  
 քին մէջ աս ցուցուցած համարները կարդանք՝ գլխովին  
 տարբեր բան կ'գտնանք . Պօղոս Առաքեալ Թլիսաաու-  
 թեան համար կ'ըսէ թէ շահ մը չ'ըներ , չ'է թէ մկրտու-  
 թեան համար . և թէ որ մկրտութիւնը Թլիսաաու-  
 թեան անգը դրուած կարծելով ըսեր է նէ , ան ալ ետքերը  
 պիտի ցուցնենք՝ որ ասանկ չ'է . չ'կրնար ըլլար :

հերեմիական բարբառնում մը չ'է՝  
 քրիստոսի՝ և Առաքելոց հաւատալ պէտք  
 է հիմա, չ'էնէ իրենց հակառակորդներնուն  
 որ Աւետարանական էնք ըսելով առաջօս  
 կ'ընեն Առաքելները՝ Որդին և Որդիին  
 Առաքելը, ու նաև Սուրբ Հոգին. չ'է՝ որ  
 Ասանկ Աւետարան քարոզելներուն համար  
 «Նզովեալ ըլլայ» կ'ըսէ Գիլգըլ. (Գա  
 շափ. 1. 9.)

Յովհաննէս կ'ըսէ. «Ան որ զԱստուած  
 »կ'ճանչնայ՝ Մեզի կ'ըսէ. և ան՝ որ Աստ  
 »ուծմէ չ'է՝ Մեզի չ'ըսէր.» (Ա. Յովհ.  
 4. 6.) Ուրեմն ասոնք՝ որ մտիկ չ'են ըներ  
 անոնց, ոչ ալ քրիստոսի, ի՞նչ եղած կ'ըլ  
 լան, միայն աս կրնանք ըսել ինչ որ քր  
 իստոս ըսաւ անհաւատ Հրէաներուն.

«Ան որ Աստուծմէ է, Աստուծոյ խօսքե  
 »րը մտիկ կ'ընէ. և դուք անոր համար մը  
 »տիկ չ'էք ըներ, որ Աստուծմէ չ'էք.»  
 (Յովհ. 8. 47.) և թէ որ Աստուծմէ չ'են,  
 և անոր պատուերնէրը չ'են պահեր, ապա  
 և չ'են սիրէր, և ասանկ մարդուն համար  
 ալ ըսուէր է. «Եթէ որ ոչ սիրէ զՏէր  
 »Յիսուս. եղիցի նզովեալ, մարանաթա՛ն»  
 (Ա. Կորնթ. 16. 22.)

Ս'երջապէս՝ չ'երկարենք խօսքը, մեծ  
 ապատամբութիւն կ'ըլլայ Բանին՝ և մեր

Հայատակութեան օրէնքին դէմ, քրիստոսի մեզի սորվեցուցածէն տարբեր դիտաւորութեամբ գործի դնելը որ և իցէ բան մը. Ի թողութիւն մեղաց սորվեցուց քրիստոս մկրտութիւնը, նոյնը և Առաքեալք սորվեցուցին, ասանկ ալ Լուտեր կ'սորվեցնէր մեկ եզակիան ճշմարտութեամբ մը, ինչպէս որ ետքերը պիտի տեսնենք, պարտինք մենք ալ ծայրագոյն հնազանդութեամբ սոյն աս դիտաւորութեամբ գործի դնել. զի այն ջուրը՝ որով կը մկրտինք, չ'է թէ հասարակօրէն լուացուած ջուրերնուս պէս ջուր մըն է, «Այլ ջուր՝ Աստուածային հրամանովը բռնուած և Աստուծոյ Խօսքովը կնքուած. (4)» (Լուտեր.)

(4) Արնայ ըսուիլ հիմայ՝ որ Լուտեր աս խօսքերը գրած ատեն՝ տակաւին Հռովմէական վարդապետութեանց մէջ ընկղմած ըլլալով աս մասին ալ գրածը ընդունելի չ'է՝ և չ'է եղած Բողոքականներէն. բայց ճշմարիտը զրուցելով ասանկ չ'կրնար ըլլալ. ինչո՞ւ որ նոյն քրիստոնէականին թարգմանիչը անոր մէջ պարունակեալ անընդունելի բաները նշանակեր է. ինչպէս որ ասոր մէկ ցոյցը տուած ենք աս գործիս Ա, Տեարին մէջ. (երես 10—11 ծանօթ). Իսկ անիկայ միայն խոստովանութեան վրայօք ըլլալով կնիք հաստատութեան չ'կրնար ըլլալ մեր խօսքին. վասն որոյ աս ծանօթութիւնս ալ կ'յաւելցրնենք աս տեղ՝ նոյն քրիստոնէականին յառաջաբանութենէն քալելով. որուն մէջ որոշակի կ'տեսնուի չ'ընդունած բաներնին:

«Աս գործիս մէջ պիտի տեսնուի որ — կրակ — հին

Դանք հիմայ Լուտերի Բ հարցումին:

Լուտեր . 2 . “ Հ . Որն է Աստուծոյ  
“ Խօսքը .

“ Պ . Լն որ Տէրն մեր Յիսուս Քրիս-  
տոս ըսաւ Մատթէոսի վերջին գլուխը .  
” (28 . 19 . ) “ Գնացէք աշակերտեցէք ա-  
” մէն հեթանոսները , մկրտեցէք զանոնք  
” յանուն Հօր՝ և Որդւոյ և Հոգւոյն Սրբ-  
” բոյ : (Երէս . 26 . ) ”

Լս հրամանը անժխտելի է . առանց կա-  
տարելու անմեղութիւն չ'կրնար ըլլալ . քան  
զի կ'հրամայէ որ “ ընենք , ” չ'է թէ “ ու-

” դրութենէն քանի մը բաներ պահուած են , որոնք  
” շատ հաւանական է որ փոխուէին՝ թէ որ անիկայ բա-  
” րեկարգութեան սկզբնաւորութենէն քիչ մը ետքերը  
” յօրինուած ըլլար . ասոնք են ( ա . ) Պապական բա-  
” ժանումը Տանաքանեայ Պատուիրանքին , ( բ . ) երեսը  
” խաչակիցները և ( գ . ) Խոստովանիլը : ” (Երէս . է — զ .

Ըսել է որ աս երեք բաներէն 'ի զատ մոլորութիւն  
մը չը կայ եղեր ան գրքոյկին մէջ . բաց 'ի ասոնցմէ ինչ  
վարդապետութիւն որ կ'պարունակի հոն տեղ՝ ամեն  
ալ ընդունելի են . վասն զի կ'իմանամք դարձեալ նոյն  
( զ ) երեսէն որ “ Բովանդակ Գերմանիոյ մէջ անիկայ է  
” Բրողեսթանդ դպրատանց և ընտանեաց մէջ գործած-  
” ուած Քրիստոնէական վարժութեան առաջին գիրքը : ”  
Թէ որ բովանդակ Գերմանիա Լուտերի աս յօդուածը  
կ'ընդունի , ահա՛ բովանդակ Ամերիկա ալ մեր ազնուա-  
կան Բերկադիին մկրտութեան ճառը կ'ընդունի . և աս  
երկուքն ալ ան մեկ դաւանութեան պատկերը ըլլալու  
են՝ որուն վրայօք կ'պարծենան թէ միաբան են . որ աս  
բանին վրայ ետքերը այլ ևս պիտի խօսինք :

զենք նէ” : Երբ որ մեկ մարդ մը կ’հաւա-  
տամ կ’ըսէ , միջոց ունի ու չ’մկրտուիր ,  
անհաւատ է ան . վասն զի հաւատք չ’բե-  
րեր իր խօսքերուն , (Մ<sup>աբ</sup>ի . 16 . 16 . ) և  
պարտաւոր կ’ըլլայ՝ նախ վերի պատուիրա-  
նինն , (Մ<sup>աբ</sup>ի . 28 . 19 . ) հետեւաբար Աստ-  
ուածային արդարութեանը . որովհետեւ՝ ին-  
տոր որ “Փարիսեցիները և Օրինականե-  
րը Աստուծոյ Խորհուրդը իրենց անձին  
”մէջ անարդեցին , որ անկից (Յովհաննե-  
”սէն) չ’մկրտուեցան . ” (Ղ<sup>ա</sup>-ի . 7 . 30 . )  
անանկ ալ ան մարդը Յիսուսի Բրիտանի  
Խորհուրդը անարդած կ’ըլլայ իր անձին  
մէջ . մէյմը՝ մկրտութիւնը բանի մը տեղ  
չ’դնելուն համար , մէյմ’ալ Բրիտանի խօս-  
քին անհաւատութիւն բերելով՝ ի թողու-  
թիւն մեղաց չ’մկրտուելուն համար : Լոկ  
հաւտաբով չ’ենք փրկուիր՝ (զի սատա-  
նայական է . Կե<sup>ս</sup> Ի վերն , երե<sup>ս</sup> 14-15 :  
76-77 . ) Ինտոր որ “Միայն հացով մար-  
”դը չ’ապրիր . հապա ան ամեն խօսքով  
”(կ’ապրի՝ այսինքն կ’փրկուինք , ) որ Աս-  
”տուծոյ բերնէն կ’ելլէ . ” (Մ<sup>աբ</sup>ի . 4 . 4 . )

Մատթէոս Աւետարանչին նկարագրած  
Բրիտանի աս վերջին կտակը (28 . 19 . )  
արեւկ՝ կ’բացատրէ մեզի “Հաւատալ” բա-  
ռին ինչ ըլլալը . Մարկոս “Ան որ հաւա-



„տայն և մկրտուի . . . ” կ'ըսէ . Մատթէոս  
 “Աշակերտեցէք . . . (և) մկրտեցէք . . . (և)  
 ”ուսուցէք նոցա պահել զամենայն . . . ”  
 կ'ըսէ . հաւատացող բառը ինչ կ'ցուցնէ  
 նէ՝ աշակերտ բառն ալ նոյնը կ'ցուցնէ .  
 աշակերտը՝ վարդապետին՝ կամ վարժապե-  
 տին ըրածը ընել կ'տրվի . և քանզի մեր  
 վարդապետը “կ'ըներ և կ'տրվեցներ . ”  
 (Գործ . 1 . 1) Նախ ինքը մկրտուեցաւ ,  
 Մատթ . 4 . 16 . Մարի . 1 . 9 . Ղուկ . 3 . 21 . )  
 և ապա հրամայեց մեզի մկրտիլ . (Մատթ .  
 28 . 19 . ) և որովհետեւ ինքը “Մեղք չ'եր  
 ”գիտեր . ” (Բ . Վորնի . 5 . 21 . ) ինտոր որ  
 ինքն ալ կ'ըսէ . “Ո՞րք 'ի ձէնջ յանդիւ-  
 մանեսցէ զիս վասն մեղաց . ” (Յովն . 8 .  
 ”46 . ) ինքը մեղաց սրբուելու համար չը-  
 մկրտուեցաւ , թեպէտ և մեզի անանկ  
 պատուիրեց . (Մարի . 16 . 16 . ) հապա՛ մե-  
 զի օրինակ ըլալու համար , որ բոլոր իրեն  
 հաւատացողները պարտին մկրտիլ , իրեն  
 պէտ

Սուրբ Գիրքին մէջ ուր տեղ որ ըսուած  
 է Հաւատալ , պարտինք Աշակերտիլ հաւ-  
 կրնալ . այսինքն , անանկ մը հաւատալ որ  
 “Չայն տուող պղնձի պէս , կամ հնչեցող  
 ”ծնծ զաներու պէս” (Ա . Վորնի . 23 . 1 . )  
 բերնով խօսիլ չ'տար , հապա՛ գործը ընել

կուտայ . և աս է հաւատալը : Պօղոս Գաղատացւոց կ'գրէ «Անոնք որ հաւատքէն » են , անոնք են Աբրահամի որդիները . » (3 . 7 . ) և Քրիստոս կ'ըսէ . «Թէ որ Աբրահամի որդիները ըլլայիք , Աբրահամի » գործքերը կ'գործէիք . » (Յովն . 8 . 39 . ) Պօղոս՝ Աբրահամի որդիները հաւատացողները ըլլալը կ'սորվեցնէ . Քրիստոս ալ Աբրահամի որդիները ըլլալը , այսինքն հաւատացեալ ըլլալը՝ գործքով ըլլալը կ'ցուցնէ : Ուրեմն հաւատքին գործը չընելը՝ անհաւատութիւն է . այսինքն , անհաւատ է չ'մկրտուողը : Աս հաւատքը կ'պահանջէ Քրիստոս բոլոր մկրտուելու եկողներէն . ուստի կ'հետեւի՝ որ տղայք մկրտուելու չ'են . ինչո՞ւ որ՝ ո՞չ հաւատք ունին՝ ո՞չ ալ զիրենք մկրտելու համար յատուկ հրաման մը՝ մեր Տէրօջմէն : Հեթանոս մը մկրտուելու գալուն չ'ենք մկրտելու մինչև որ իր հաւատքը չ'խոստովանի ,

Տղայք որ հաւատք չ'ունին , ի՞նչո՞ւ կը մկրտենք :

Մէկը պատասխան կուտայ հիմայ մեզի ,  
 օ . «Անանկ է նէ՛ տղայք ինտո՞ր կըր-  
 » նան վրկուել . որովհետև միայն հաւատա-

» ցողները պիտի փրկուին: » (5)

Թէ որ աս պատասխանը ճշմարիտ Աւետարանական վարդապետութիւն է՝ կ'հետեւցնենք ասկից, կամ խօսքին հատուկութիւնը աս է՝ որ բոլոր տղայք կ'փրկուին, թէ՛ Քրիստոնէի զաւակ ըլլան, թէ՛ հետանոսի, և թէ՛ Հրէի. և աս վարդապետութեանը մեր խելքը չըհասնելուն և հաւանութիւն չ'կրնալ տալերնուս համար՝ կ'թողունք որ նոյն մեկնիչը կրկին հրատարակէ իր վճիռը:

բ. «Մենք ինչպէս կերակուր կրնան ուտել, որովհետեւ Պօղոս կ'ըսէ կոր թէ՛ մինակ գործողները ուտելու են: » (6)

Մասնկ պատասխանմ'ալ՝ թերևս ռամիկներէն անգամ լսելու անանկնալ էինք

(5) «Էջլէ իսէ՛ մասուճար նաճըլ գուրթուլա պիւլիւր • չիւնքի սալթ ինձնանլաճր գուրթուլաճագ տրու: » (Մեկնութիւն • Մատթ • տպեալ • Ի Տպարանի Առաջին Կրիֆթիթի • Երես • 704 • էջ • 2 •)

(6) «Օնլար նաճըլ թասամ ալա պիւլիւր • չիւնքի Պօղոս տէյօր քի սալթ իչէյէնլէր եէմէլի տիր: » (Մեկն • Մատթ • Աւետարանին • Երես • 704 • էջ • 2 •)

Թէ որ աս խօսքերը մեր ըսածին պէս «Առանց մկրտութե մէկը Աստուծոյ Արքայութիւնը չ'մտնար» ըսելու զէլու համար դրած ըլլար հեղինակը՝ իրաւամբ ճշմարիտ նմանութիւն կ'ունենար իր օրինակը, և մենք ալ իր կարծիքը հերքելու ջանք չ'ենք ընել:

ալ նէ՝ որպէս թէ լսեցինք, որմէ կ'գուշա-  
կենք որ աղեկ տեղեկութիւն չ'է ստացեր  
այդ իմաստունը Սուրբ գրոց հմտութեա-  
նը վրայօք: Ի՛նչ և իցէ, մենք հիմակու  
հիմա աա կ'ըսենք, որ ան Պօղոսի խօսքե-  
րէն չ'իմացուիր՝ որ չ'ըջող գործողները  
հաց ալ պէտք չ'է ուտեն, այլ՝ իրջող և  
չ'գործողները պէտք չ'է ուտեն. քանզի՝  
«Ա՛ն որ չ'ըջող գործ գործել, (հաց) ալ  
թող չ'ուտէ. » (ք. թեսաղ. 3. 10.) կ'ըսէ.  
չ'է թէ «Անոր չ'ըջող գործ գործել»  
և այլն:

Իսենք իր երրորդ պատասխանին ալ  
ք. «Տղայք գտնուած վիճակնուն հար-  
» կէն՝ հաւատքին կատարումը (իճրան) ը-  
» նելու կարող չ'են. և թէ որ ասոնք՝  
» հաւատքը առանց կատարելու (իճրան  
» ընելու) կրնան վրկուիլնէ, որ ասիկայ  
» մեկայէն աւելի առաջ և մեծ բան մըն  
» է, հարկան անոնք չ'հաւատարով ալ կրնան  
» մկրտուիլ, որ ան՝ աւելի անգտիկ բան է: » (7)

(7) «Մասումլար՝ պուլունտուգլարը հալին իգթիզա-  
» սրնտան՝ իման իճրասընը էթմէյէ դատիր տէյիլէր  
» տիր. վէ էյէր օնլար՝ իմանրն իճրասընը էթմէզտէն  
» գուրթուլա պիլիլիլէր իսէ, քի պու օպիլիլիտէն տահա՛  
» իլիլի վէ պէօյիւք պիլի շէյ տիր, էլպէթտէ օնլար ի-  
» ման կէթիրմէզտէն տախի վաթթիզ օլա պիլիլիլէր, քի  
» պու տահա՛ քիւ շիւք շէյ տիր: » (Մեկն. Մատթ. .  
Երես. 704. էջ. 2.)

Մ.ս պատասխանին ալ անընդունելի ըլլալը ցուցնելու համար՝ պարտինք քանի մը դիտողութիւններ ընելու:

Թ. «Մ.ս.անց հաւատքին կատարումը» (իճիան) ընելու կրնան փրկուիլ՝ կ'ըսէ նէ՝ անտեղի է. ինչո՞ւ որ՝ Բրիտոս Տէրն մեր կատարեալ հաւատք կ'պահանջէ ամենէն: Թէ որ առանց հաւատալու արդայք կ'փրկուին նէ՝ անհաւատներուն տրդաքը ի՞նչու չ'պիտի փրկուին: Միկայ կըսեմ՝ միայն իր խօսքին անպատեհութիւնը ցուցնելու համար. որովհետեւ մենք կ'ճանչնանք Աստուծոյ ձրի շնորհքը՝ որ մկրտութեան սուրբ խորհրդոյն հետ կապուելով մարդոց համար սրբարար կ'ըլլայ՝ հաւատքին հաւասար:

Բ. Հաւատքին գործը (իճիան) ընելը կամ ՚ի լուսն հասցընելը մկրտուելէն «Աւելի առաջ և մեծ բան մըն է» ըսելն ալ առջի խօսքին պէս յարդ մը չ'ունի, և չ'կրնար ալ ունենալ, միչդեռ ճշմարտոր չ'խոստովանիր. անգամ մը մտածական ընել պէտք էր իրեն հաւատքին գործը ընելուն ի՞նչ բան ըլլալուն վրայօք:

Մ.ս. առաջ՝ Բրիտոսի հաւտալն ալ կատարելապէս՝ հաւատքի կատարումն է, հաւատքը դործելու առաջին գործը, բա-

րեգործութեան նախնթացը կամ նոյն ինքն  
 քրն աղբիւրը և սկզբնապատճառն է :  
 Մկրտութիւնն ալ ինչպէս վերը զրուցեցինք՝  
 հաւատալու ենթակայ է . չկրնար  
 ըլլալ հաւատքով մկրտուած մէկը՝ որ (մինչեւ  
 վերջը հաւատոյ պտուղ Բարեգործութիւնները  
 կատարելու յարատեւ , և անկեց ետքը ) կորսուի , ինչպէս նաև չկրնար  
 ըլլալ առանց մկրտուելու հաւատացող մը  
 (այսինքն թերեհաւատ մը , ) որ փրկուի :  
 Հաւատալ պէտք է՝ մկրտուելու համար ,  
 և կատարեալ հաւատք ունենալու համար  
 ալ մկրտուիլ , ( և ամեն պատուիրանքները  
 գործի դնել . ) հաւատքը՝ որչափ պէտք  
 է մկրտութեան՝ նոյնչափ ալ մկրտութիւնը  
 հատուցին . ոչ մէկը աւելի՝ ոչ ալ  
 միւսը պակաս պէտք է . երկուքն ալ նոյն  
 հաւասարութեամբ . ուրեմն ծաղրելի խօսք  
 մըն է « հաւատքին գործը ընելը » մկրտուելէն  
 աւելի մեծ բան մըն է ըսելը . ուրովհետև  
 ըսել կ'ըլլայ՝ թէ « մկրտուելը մկրտուելէն  
 մեծ բան մըն է » . կամ « Հաւատալը  
 հաւատալէն մեծ բան մըն է . »

Արրորդ դիտողութիւննիս աս սոյն էութիւնը  
 ունի . այսինքն ,

ճ . Մկրտուելը հաւատալէն « Աւելի պզտիկ »  
 բան մըն է . » Աս թ և ճ դիտու

զուժիւններնուս մէջ մէկ մեծ հակասու-  
 թիւն մը կ'ընի քրիստոսի՝ ու իր խօսքերը  
 մեկնող աս վարդապետին մէջ տեղը . և  
 աս ըսել պէտք է՛ թէ երկու հակա-  
 սական զուցուածքներ մեկ ճշմարտութիւն  
 մը չ'են կրնար ըլլալ . վասնորոյ՝ աւելի ար-  
 ժան է որ կրկին առջևնիս առնենք քրիս-  
 տոսի խօսքերը՝ աս մեկնիչին խօսքերուն  
 հետ բաղդատելով՝ որի՛նք իրաւ և որի՛նք  
 սուտ ըլլալը գտնալու համար: Աւ թէպէտ  
 մինչև հիմայ զուրցածնիս՝ զուրցելիքներ-  
 նուս տեղը կ'բռնէր, բայց քրիստոսի աս  
 խօսքերուն դէմ ուրիշ շատ առարկութիւն-  
 ներ ըլլալուն համար՝ պատշաճ համարե-  
 ցինք վերստին խօսիլ .

«Ան որ հաւատայ ու մկրտուի՝ պիտի  
 »մկրկուի . . . » քրիստոս աս տեղ չ'որոշեր  
 կոր հաւատքին և մկրտութեան աստիճան-  
 ները, թէ որչափ մեկզմեկէ մեծ ու պրզ-  
 տիկ, հարկաւոր և անհարկաւոր բանեն են .  
 նմանապէս աս խօսքերուն մէջ . «Գնացէք  
 »այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն  
 »հեթանոսս . մկրտեցէք զնոսա Անուն  
 »Հոր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն Սրբոյ .

»Աշակերտել՝ ինչ ըսել է, ինձի հաւա-  
 տացուցէք՝ և իմ վարդապետութիւններս  
 անոնց սորվեցուցէք ըսել չ'է . Մկրտու-

Թիւնն ալ Քրիստոսի Վարդապետութիւնը չ'է՞ . էյ ինչու բաւական չ'համարելով «Աշակերտեցէք» ըսելը՝ «մկրտեցէք» բառը կ'յարէ կոր ետեւէն , ինչու համար մկրտելու կերպն ալ կ'սորվեցնէ կոր , միթէ Քրիստոս՝ քանի որ աշխարհի վրայ էր՝ չ'էր մի որ Առաքեալները կ'մկրտէին , (Յովհ. 4 . 2 .) : Անոր համար՝ որ որովհետեւ «Ամէն իրէն հաւատացողները իր անունովը մեղաց Թողութիւն կ'առնեն . » (Գործ . 10 . 43 . ) իր անունը՝ մկրտութեան վրայ կանչել սորվեցնէ՝ որով ՚ի Թողութիւն մեղաց կատարուի մկրտութեան խորհուրդը երախային վրայ :

Մեր ազնուական Բերիացին՝ մտիկ ըրէք հիմայ՝ որ իր սովորութեանը պէս սուրբ դիրքերը քննելով՝ գործոցին առ վերի վկայութեանը համար ինչ կ'զրուցէ : « . . . Ամէն իրէն հաւատացողները ( չ'է՞ թէ մկրտողները ) իր Անունովը մեղաց Թողութիւն կ'առնեն . » (Երես . 4 . 6 . ) Բնաւ միտքէն ալ Չէ անցուցեր որ Պետրոս՝ առ քարոզութիւնը որոնց որ կ'ընէին՝ անոնց վրայ Սուրբ Հոգիին լիջնալն ալ տեսնելէն ետքը՝ մկրտեց Յիսուսի Քրիստոսի Անունովը : (Գործ . 10 . 48 . ) Ինչու կ'կանչէ կոր Յիսուսի Քրիստոսի անունը ,



վասն զի անկից զատ անուն մը չ'կայ մեզի  
 փրկութիւն տուող , որուն որ կից եղած  
 պայմանը , այսինքն հաւատարը ու մկրտուի-  
 լը ընդունել կուտան մեզի աս փրկութիւ-  
 նը :

“ Հաւատքը ինչ է .

“ Լ.Թէ ոչ յուսացուած բաներուն  
 ” հաստատութիւնը՝ ու չ'երեցած բանե-  
 ” յուն ազացոյցը . . . Հաւատքով կ'իմա-  
 ” նանք թէ աշխարհքը Աստուծոյ խօս-  
 ” քովը հաստատուեցաւ . ” (Եբր . 11 . 1,3 . )  
 Ասանկ ալ հաւատքով կ'իմանանք որ Քրիս-  
 տոսի իր խօսքովը հաստատուեցաւ ՚ի թո-  
 դութիւն մեզաց մկրտուիլը , և որ կ'մկրտ-  
 ուինք իր Անունը կանչելով՝ կ'թողուի  
 մեզի :

“ Հաւատքով Նոյ հրաման մը առնելով  
 ” (Աստուծոյ) դեռ չ'երեցած բաներուն  
 ” համար , վախճալով կ'շինել տապանը՝ իր  
 ” տունը փրկելու համար . որով աշխարհս  
 ” դատապարտեց . և ժառանգաւ որ եղաւ ան  
 ” արդարութեանը որ հաւատքով կ'ըլլայ . ”  
 (Անդ . համար . 7 . ) Նոյնպէս և մեք՝ հա-  
 լատքով հրաման մը առնելով Աստուծմէ  
 դեռ չ'երեցած յաւիտենական տանջանք-  
 ներուն համար , վախճալով կ'շինենք ան  
 տապանը՝ (8) , (այսինքն կ'մկրտուինք , )

որով ժառանգաւոր կ'ըլլանք հաւատքով  
եղած արդարութեանը:

Թէ որ ասոնցմով յայտնուեցաւ՝ որ  
մկրտուիլը հաւատալու ենթակայ է, ուրե-  
մբն չ'կրնար ըսուիլ որ անկից պզտիկ բան  
է. վասն զի՝ ասանկ ըսելն այլ «Քրիստոս  
» հաւատքէն պզտիկ բան է» ըսել կ'ըլ-  
լայ: Թէ որ հաւատքով կ'բռնենք թէ  
մեկ Աստուած մը կայ մեր մեղքերը թո-  
ղելու և զմեզ նորոգելու և վերստին ծը-  
նել տալու բաւական, հաւատքով է  
դարձեալ կ'ընդունինք՝ որ նոյն Տէրը ըսեր  
է. «Ան որ . . . մկրտուի՝ պիտի փրո-  
» կուի . » և «Թէ որ մէկ մարդ մը  
» ջրէն . . . չ'ծնի՝ չ'կրնար Աստուծոյ արքայ-  
» ութիւնը մտնել. » (Յովհ. 3. 5.)

Հիմայ դառնանք մեր Ազնուականին,  
նայինք ինչ կ'ըսէ. «Ան որ չ'հաւատար»  
» ըսելուն տեղ՝ «ի՛նչու չ'ըսաւ Փրկիչն  
» մեր . Ան որ չ'մկրտուի՝ պիտի դատա-  
» պարտուի Պատճառը յայտնի է. քան-

---

(8) . Ինտոր որ Նոյի տապանը ութը հոգիի չափ մար-  
դիկը ջուրէն ապրեցուց, «Չեզ ալ ան օրինակին պէս  
» մկրտութիւնը պիտի ապրեցընէ՝ չէ՛ թէ մարմինն  
» աղտը մէկ դի ձգելով, այլ բարւոյք մտաց հանդէսը  
» առ Աստուած Յիսուս Քրիստոսի յարութիւնովը. որ  
» երկինք գացած, ու աստուծոյ աջ կողմն է:» (Ա.  
Պետ. 3. 20—22.)

”զի՛ մկրտութիւնը հարկաւոր չ'է՛ փրկու-  
 ”թեան , ինտոր որ հաւատքը հարկաւոր  
 ”է . ” (Ազնուական Բերիացիին Մկրտու-  
 թեան ճառին մեջ . երես . 45 .)

Ասանկ տգիտական խօսք մը ու պատ-  
 ճառ մը պարզապէս “Չէ՛” բառով կը  
 ջրեմ . քանզի՛ թէ որ մկրտութիւնը փրկ-  
 կութեան հարկաւոր չ'էր՝ ուրեմն Բրիտ-  
 տոս անհարկաւոր արարողութիւն մը կտակ  
 թողուց մեզիս ‘ Չ’է , ասանկ չ'է . պատ-  
 ճառը ան է որ գիտէր Տէրը՝ որ մէկը  
 իրէն չ'հաւատայ նէ՛ իր խօսքն ալ  
 չ'բռնէր : Ինտոր որ ասոր մեկ օրինակը  
 Սուրբ Գիրքին մէջ կ'տեսնենք : Երբ որ  
 Տէր Աստուած՝ Մովսէսը Փարաւոնին  
 խրկեց՝ որ իր ժողովուրդը թող տայ , “Փա-  
 ”րաւոն ըսաւ , Ո՛վ է Ան (Իսրայելի Տէր  
 ”Աստուածը , ) որ Անոր խօսքը մտիկ ը-  
 ”նեմ Իսրայելի տղաքը թող տալու հա-  
 ”մար . Տէրը չ'եմ ճանչնար՝ և (չ'ճանչնա-  
 ”լուս համար) Իսրայելը չ'եմ թողուր : ”  
 (Եւլի . 5 . 2 . ) Ուրեմն Բրիտոս անոր հա-  
 մար “Ո՛վ որ չ'հաւատայ” բառին վրայ  
 “և չ'մկրտուի” բառը չ'է յաւելցուցեր՝  
 որ չ'հաւատացողը չ'մկրտուիր : Իտլոր  
 մկրտողներուն համար՝ անարատ հա-  
 ւատք պէտք է , և

Տղայք որ չ'ունին՝ ի՛նչու կ'մկրտենք:  
Դարձեալ առջևնիս առնենք Մատթէի  
Աւետարանին Մեկնիչին խօսքերը .

“Տղայք գտնուած մի՛ճակնուն հարկեն՝  
”հաւատքին գործը (ի՛ճրան) ընելու կա-  
”րող չ'են, և թէ որ անոնք առանց հաւատ-  
”քին գործը ընելու կրնան փրկուիլ նէ՛  
” . . . հարկաւ անոնք չ'հաւատարմի ալ  
”կրնան մկրտուիլ . . .”

Աս ստոյգ է որ առանց հաւատքի մարդ  
չ'փրկուի, իսկ տղայք կ'փրկուին, չ'է թէ  
միայն չ'կրնալ հաւատարմուն համար, այլ  
նաև՝ ՚ի թողութիւն մեղաց մկրտուելուն  
համար . ինտոր որ խաչին վրայի աւազակն  
ալ միայն հաւատարմի փրկուեցաւ, որով  
հետև անհնար էր անոր մկրտուիլ:

Քրիստոս ի՛նչ ըսաւ . “Ան որ փրկուի  
”մկրտուի” ըսաւ, չ'էնէ “Ան որ . . . մը-  
”կրտուի պիտի փրկուի” ըսաւ . ուրեմև  
կ'մկրտենք տղայքը, չ'է թէ փրկուած են  
անոր համար, այլ փրկութեան համար, և  
արդարութեան: Պատասխան կուտայ հի-  
մայ սա խօսքերնուս մեր Ազնուականը  
ըսելով “Օրէնքին վախճանը Քրիստոս է՝  
”ամեն հաւատացողներուն (չ'է թէ մկր-  
”տուողներուն) արդարութեանը համար .”  
(Հո՞ով . 10 . 4 . և Ազնուականին տեարա)

կին մէջ, երէս . 46, )  
 Ամեն հաւատացող ինչո՞ւ համար ար-  
 դարութիւն կ'ունենայ կոր . վասն զի հա-  
 ւատքին դործը կ'կատարէ : Անուն Յի-  
 սուսի մկրտութիւն ալ արդարութիւն է . և  
 ասոր համար յառաջ քան «հաւատացող-  
 ներուն» չ'է թէ մկրտուողներուն » ըսե-  
 լին՝ մտածել պէտք էր իրեն թէ արդեօք  
 հաւատացող ըսելը «չ'մկրտուող» ըսել  
 էր . եթէ չ'մկրտուող ըսել էր՝ ան ատենն  
 ալ չ'հաւատացող ըսել կ'ըլլար . որովհե-  
 տեւ չ'մկրտուիլը չ'հաւատալ է : Անոր  
 համար «հաւատացող» զուրցուէր է՝ որ  
 հաւատացեալ մը չ'կրնար չ'մկրտուծ մը  
 նալ, բայց կրնայ մկրտուող մը անհաւատ  
 մնալ . թէ որ մկրտութիւնը իբրև լոկ ա-  
 լարողութիւն ընդունած ըլլայ : Անոր հա-  
 մար հաւատացեալ ըսուէր է՝ որովհետև  
 մկրտեալ ըսելով ինչ ուխտի մկրտութեան  
 մկրտուած ըլլալը յայտնի չ'ըլլար : Անոր  
 համար հաւատացեալ ըսուէր է՝ որովհե-  
 տեւ միայն հաւատացեալները 'ի քրիստոս  
 Յիսուս կ'մկրտուին : Անոր համար «հա-  
 յաւատացողներուն» արդարութեանը հա-  
 մար» ըսուէր է՝ որովհետև հաւատացող-  
 ները մկրտութեան արդարութիւնն ալ կ'ը-  
 դործեն, և վասն որոյ իրաւունք չ'ունի մեր

Ազնուականը « Հաւատացողներուն՝ չ'է թէ  
 » մկրտուողներուն արդարութեանը հա-  
 » մար » ըսելու , երբ որ նոյն իսկ մկրտու-  
 թիւնը արդարութիւն կ'կոչուի : (Մատթ .  
 3 . 15 . ) Եթէ ոչ՝ կ'պնդէ որ իրաւունք  
 ունի , չ'եմ գիտէր ինտոր պիտի մեկնէ սա-  
 խօսքերը . « Ապաշխարեցէք և ձեզմէ ա-  
 » մէն մեկը թող մկրտուի . . . մեղաց թու-  
 » դութեան համար . » . և « Ելի՛ր մկրտուէ՛  
 » և մեղքերդ լուս' Անոր անունը կանչե-  
 լով . » (Գործ . 22 . 16 . ) Անշուշտ՝ վերի  
 մեկնած կերպովը՝ « Ապաշխարեցէ՛ք՝ ( չ'է  
 թէ հաւատացէք ) և ձեզմէ ամէն մէկը  
 թող մկրտուի՛ » ( չ'է թէ հաւատայ ) » և  
 « Մկրտուէ՛ » ( չ'է թէ ( հաւատայ և այլն . »  
 պիտի ըսէ . Բայց չ'է , ասանկ չ'է . ինտոր  
 որ գուցէ ինք ալ կ'ստատուանի . Անոր հա-  
 ւատայը՝ որ պատուիրանքները պահելով  
 կ'ըլլայ , Ինչպէս որ կ'ըսէ Առաքեալը ,  
 « Ասով գիտենք՝ թէ անիկայ ճանչցանք ,  
 » թէ որ Անոր պատուիրանքները պա-  
 » հենք : Այլ որ ըսէ՝ թէ անիկայ ճանչ-  
 » ցայ , և Անոր պատուիրանքները չը  
 » պահէ , տուտ է , և անոր մէջը ճըշ-  
 » մարտութիւն չ'կայ : » ( Ա . Յովն . 2 .  
 3 — 4 . ) Ուրեմն ան որ կ'ըսէ թէ ճանչցայ  
 Անիկայ , հաւատացի Անոր , և Իր տուած

պատուիրանին համեմատ չ'մկրտուիր, սուտ է, անիկայ հաւատացող չ'է Անոր:

Գործոցին մէջ կ'կարդանք որ՝ «Ոմանք սրտանց ընդունելով անոր (Պետրոսի) խօսքերը՝ մկրտուեցան . » (Գործ . 2 . 41 .)

Ի՞նչու մկրտուեցան, և ի՞նչ էր Պետրոսի քարոզութիւնը: Այաշխարել ՚ի Թողութիւն մեղաց, նոյնպէս և մկրտիլ ՚ի Թողութիւն մեղաց. (Համար . 38 .) Ահա սրտանց Աստուծոյ խօսքը ընդունողները չ'մկրտուած չ'են կենար. և ասոր համար հաւատացեալ ըսուէր են Չ'կայ, մէկ հատ մըն ալ չ'կայ՝ որ հաւատայ սրտանց՝ ու չը մկրտուի:

Կարդանք հիմայ մեր Ազնուականին արդարութեան վրայօք ըրած շարունակութիւնը . կարճ՝ կարճ մեր պատասխաններուն հետ .

Ազնուա . Պողոս կրկին և կրկին կ'յայտնէ Թէ մենք արդարացած ենք միայն հաւատքով . » (Եբե . 46)

Պատասխան . վասն զի՝ իր պատուէրին հաւապք բերելով մկրտուեցանք՝ և խոստացանք բոլոր իր պատուիրանը պահելու:

Ազնուա . «Արդարութիւնը ի՞նչու համար միայն հաւատքով է . » (նոյն 46 երեսը .)

Պատասխան. Թէ որ մկրտութիւնը (ու պատուիրանապահութիւնը) չ'ըլլայ՝ մեռեալ կ'ըլլայ միայն հաւատքը. «Հաւատք առանց գործոց դատարկ են . . . և . . . մեռեալ . . .» (Յակ. 2. 20, 26.) «Ի գործոց արդարանայ մարդ՝ և ոչ 'ի հաւատոց միայն:» (Անդ. և Տար. 24.)

Աղնուա. «Անոր համար (Արդարութիւնը հաւատքով է) որ անիկայ շնորհքով է, Յիսուս Բրատոսով եղած փրկութիւնովը . . .» (Նոյն 46 երեսը.)

Պատասխան. Որ մենք կ'ընդունինք մկրտութեամբ՝ Թաղուելով Անոր հետ մահուան համար, «Որ ինչպէս Բրիտոս Հօրը փառօքը յարութիւն առաւ մեռելներէն, անանկ ալ մենք կե՛նԱՅ ՆՈՐՈՒԳՈՒԹԵԱՆ ՄԵՋ ՊՏԸՏԻՆԻ:» (Հովհ. 6. 3—4.)

Աղնուա. «Անոր համար (Արդարութիւնը հաւատքով է) որ Բրիտոսի արդարութիւնովն է, որ մեզի ձրի արուած է. և հաւատքը միջոցն է՝ որով կ'բռնենք ան արդարութիւնը և կ'ընդունինք զանիկայ . . .» (երես. 46—47.)

Պատասխան. Հոս Յակոբոս Ապետային խօսքը կրկնենք. «Ի գործոց արդարանայ մարդ՝ և ոչ 'ի հաւատոց միայն . . .» հա-



և ատքը՝ միայն գործակից կ'ըլլայ գործին,  
 և գործքէն՝ Հաւատքը կ'ԿԱՏԱՐՈՒՒՒ .  
 (Յակ. 2. 22.) և մկրտութիւնը ԳՈՐԾՆ  
 է՝ որ կ'կատարելագործէ հաւատքը . այն  
 գործը՝ որով կ'ընդունինք արդարութիւնը  
 Քրիստոս «Որ հաւատայ և մկրտիցի՝ կեց-  
 ցէ» կ'ըսէ . չէ թէ միայն «հաւատայ» .  
 ընդհակառակն՝ մեր Ազնուականը «Հաւա-  
 տայ Տէր Յիսուս Քրիստոսի (միայն հա-  
 տայ) ու պիտի փրկուի» կ'ըսէ, (Երես.  
 45.) Տէրոջը խօսքին հակառակ . և Առա-  
 քելոյն առ բանտապէտն զըուցած խօս-  
 քին . (Գործ. 16. 31.) բնաւ չ'նայելով՝ որ  
 նոյն բանտապէտը իր ընտանիքովը մկրտուե-  
 ցաւ՝ Աստուծոյ խօսքը լսելէն ետքը . (Անդ  
 համար. 33.) Ըսել է որ բանտապէտը՝ ան-  
 տարակոյս անոնցմէ սորված ըլլալով թէ  
 Անոր հաւատալը իր պատուէրները պա-  
 հել՝ և ի թողութիւն մեղաց մկրտուիլ է,  
 «Շուտ մը մկրտուեցաւ ինքը՝ ու բոլոր  
 իրենները .» (Անդ . համար. 33.) Որով-  
 հետեւ՝ Քրիստոսի վերջին կտակին մէջ  
 ինչ բանի միջոց կ'համարուի հաւատալը  
 նէ՝ նոյն բանին միջոցը կ'համարուի նաև  
 մկրտուիլը . այսինքն , փրկուելու համար  
 հաւատալ , նոյնպէս և փրկուելու համար  
 մկրտուիլ : Այսու ամենայնիւ՝ չ'կրնար ըս-

ուիլ թէ Քրիստոսի ձրի թողութենէն  
 մենք զմեզ կ'զրկենք ասանկ ըսելով, այլ  
 աւելի Քրիստոսի շնորհացը ապաւինելով  
 Վարդապետութիւնը կ'հաստատենք: Օ որ  
 օրինակ, դիցուք թէ՛ թագաւոր մը աշ-  
 խարհակալութեամբ շատ մը մարդիկ դե-  
 րի բռներ է. թէ որ ան թագաւորը դառ-  
 նայ արեամբ դնած գիներուն ըսէ. «Գուք՝  
 թէ որ ձեր հաւատքէն դառնալով՝ միայն  
 իմ շօրս երկրպագու ըլլաք, և խօսք տաք  
 ինձի՝ որ իմ կայսերական օրէնքներուս հա-  
 մեմատ պիտի քալէք ասկից ետքը՝ ձեր  
 ազատագիրը ձեզի կ'շնորհեմ. » և թէ որ  
 ան գերիները իր ըսածները ընեն նէ՛ մի-  
 թէ չ'շնորհեր թագաւորն ալ անոնց՝ ի-  
 րենց ազատագիրը: Իսկ անոնք՝ իրենց թա-  
 գաւորին կամքը կատարելով ազատեցան  
 նէ՛ կրնան մի ըսել թէ՛ «Ի՛նչ ծախքով  
 գերի բռնուեցանք նէ՛ այն ծախքերը տա-  
 լով ազատեցանք. »

Ահա ասոր պէս ալ երկնի և երկրի ան-  
 մահ թագաւորը՝ Իր սրբացուցիչ Արեա-  
 նը գինովը մեզ իրեն ծառայեցուց նէ՛ ժա-  
 ռանդութիւն մը խօստացաւ մեզի, երկնի  
 անմահական թագաւորութիւնը. սա պայ-  
 մանով որ՝ հաւատանք Իրեն՝ ու մկրտուինք  
 շօրը՝ Իրեն՝ և Սուրբ Հոգիին անունովը.

ու իր կայսերական կանոններն ալ՝ որ թե-  
 թեւ և թիւրատար պատուիրան մըն է,  
 տուաւ մեզի՝ որ պահենք: Եւ ինչ ը-  
 սենք հիմա. թէ որ մենք հաւատանք իրեն՝  
 և հաւատքնիս՝ գործքովնիս յայտնելով  
 մկրտութիւնք ու իր պատուէրները պահել  
 խօստանանք նէ՝ իր խօստմունքը չըկատա-  
 րէր. և ան ատեն կրնանք ըսել՝ թէ մենք  
 մեր պարտքը տալով առինք մեր փրկու-  
 թիւնը. չ'է՛, միայն իր շնորհքը մեզ փրկ-  
 կեց՝ կ'ըսենք, ու կ'փրկէ: «Նոյնպէս և դուք  
 » յորժամ առնիցէք զամենայն հրամայեալ-  
 » սնն ձեզ, ասաջիք՝ թէ ծառայք անպի-  
 » տան եմք, զոր պարտեանքն առնել՝ ա-  
 » րարայք:» (Ղուկ. 17. 10.)

Սկրտութիւնը ինքնին անտարբեր գործ  
 մըն է, բայց քրիստոսի շնորհքները անոր  
 հետ կապուած ըլլալը ընդունելով կ'փր-  
 կուինք. չ'է՛ թէ մեր գործքերովը, որովհե-  
 տեւ մկրտութիւնը բարեգործութիւն մը  
 չ'է: քրիստոս պատուիրեց փրկութեան  
 համար հաւատք ունենալ, և մկրտիլ.  
 (Մարկ. 16. 16.) Առաքեալները քարոզե-  
 ցին հաւատքը. (Հով. 3. 27-28. Եփե. 2.  
 20. 8. Գալ. 3. 26. Լայն Լայն.) անոնք  
 քարոզեցին նաև փրկութեան համար մը-  
 կրտութիւնը. (Գործ. 22. 16: և 2. 38.)

Հովհ. 6. 3 — 6. Տիտ. 3. 5. Ա. Պետ. 3.  
 21. Գաղ. 3. 27. Եփես. 5. 26. և այլն.)  
 Այսու ևս՝ չ'ենք կրնար ըսել թէ մեր  
 գործքերովք գնոյ կ'առնումք մեր վրկու  
 թիւնը. բայց կ'ըսեմք որ մկրտուելով Տէր  
 Գործերը Քրիստոսի արդեանցը հետ միայնե  
 լով Տէր կ'ընենք:

Ասանկ ըսելուս համար՝ Պողոս Առաք  
 եալին զմեզ նզովելուն լուրը առինք Բե  
 րկացի Ազնուականէն. (Տես իր մկրտու  
 թեան ճառին մեջ. Երես. 47.) բայց մենք  
 անիկայ Սուրբ Առաքեալին հաւատարիմ  
 թարգմանը չ'ենք ճանչնար. զի գիտենք որ  
 առանձինն իրեն յայտնուած չ'է և ասանկ  
 բան ըսած չ'ունի. բայց միայն՝ իր ներշնչ  
 եալ գրուածքը ծուռ հասկնալով սուրբ  
 Առաքեալը զրպարտած և մեզի թշնամի  
 ցուցուցած պիտի ըլլայ: Ուստի կ'մեկնենք  
 մեր խօսքը ցուցնելու համար թէ չ'հակա  
 ռակիր Առաքեալին խօսքերուն:

Մկրտուելով մեր գործքերը Քրիստոսի  
 արդեանցը հետ միացրնելով մեր կ'ընենք:

Այսինքն, մկրտուելով՝ (Քրիստոսի վրայ  
 ունեցած հաւատքնիս կ'կատարելագոր  
 ծենք, և ան ատենը՝ մեր գործքերը՝ Քրիս  
 տոսի վրայ ունեցած հաւատքնուս բղխե  
 լով՝ մինչև անգամ յանուն Տեսան մեկուն

կաթիլ մը ջուր տանք նէ՛ վարձքերնիս չը-  
կորսուիր: (Մատթ. 10. 42.) Ասիս քան  
զմկրտիչն՝ մեկ մարդ մը ինչ բարի գործ  
գործէ՛ առանձ կենդանի հաւատքէ ը-  
լայով չարագործութիւն կ'սեպուի. քանզի  
ան մարդը չ'մկրտուելովը կ'ցուցնէ՛ որ իր  
գործքերովը պիտի արդարանայ: Իսկ մենք  
մկրտեալքս՝ մեր ճգնութեանց վարձքը  
հաւատքով առնելով (Թ. Յ. 8.) մեզի  
կ'սեպհականենք Քրիստոսի շնորհովը .  
այսինքն՝ մեր կ'ընենք:

Դանք որ՝ աղայք ոչ գործ ունին ոչ  
հաւատք, մանաւանդ Տէրը յատուկ հրա-  
ման մը չ'տուաւ որ ղիրենք մկրտենք, ընդ  
հակառակն ըսաւ որ՝ բոլոր մարդիկը որ  
պիտի մկրտենք, նախ սորվեցնենք՝ հաւա-  
ցրենք՝ աշակերտ Քրիստոսի ընենք զա-  
նոնք . լսենք հիմա մկրտութեան վրայոք  
ներքինիին Փիլիպպոսին հետ ըրած խօսակ-  
ցութեանը. «Ահա ջուր, ալ ինչ բան զիս  
» կ'արգիլէ մկրտուելէն. » (Գործ. 8. 36.)  
Բայց Առաքեալը մէկէն ՚ի մէկ չ'մկրտեց  
զանիկայ . ան մկրտութիւնը Հրէական  
ուխտերու մկրտութեանց պէս չ'էր . մէկ  
ծանր և շատ մեծ խորհուրդ մըն էր . մէկ  
ճնունդ մը վերապին՝ որ անկից առաջ ալ  
Աւետարանաւ ծնած ըլլալու էր: Այսին

որոյ՝ Առաքեալը ըսաւ անոր . «Թէ որ քու  
 »բոլոր սրտովդ կ'հաւատաս՝ կարելի է . »  
 (Անդ . համար . 37 .) Աս ի՛նչ մեծ բան է  
 եղեր մկրտութիւնը , որ մինչև բոլոր սրտ-  
 վը չ'հաւատայ մէկը նէ՝ անկարելի կ'ըլ-  
 լայ կոր տնոր մկրտուիլ . և ի՛նչու ուրեմն  
 տղոց հաւատքը չ'փնտռած չ'լսած կ'մկր-  
 տենք .

Աւելն դնենք հիմա մեր Մեկնիչին չոր-  
 բորդ պատասխանիմն :

դ . «Թէ որ Աստուած անոնց հասակը՝  
 »Թլփատուելնուն արգելք (եղող ) բան մը  
 »չ'համարեց նէ , մեզի յատկապէս հրաման  
 »չ'ըլլալով՝ անոնց հասակը մկրտուելնուն  
 »արգելք համարելու ի՛նչ իրաւունք ու-  
 »նինք : » (9)

Թէ որ Ճննդոց 16 ԳԼ . 12 համարէն  
 խմացէր է՝ որ մանկական տիքը Թլփա-  
 տուելու արգելք չ'ըլլար , Մատթէոսի 26  
 ԳԼ . 19 համարէն , և Մարկոսի 16 ԳԼ . 16  
 համարէն ալ Թ'ող սորվի՝ որ մկրտուելու ա-  
 տեն պէտք եղած բանը Թլփատուելու ա-

(9) «Էյէր Ալլահ օնլարըն սինինի սիւննէթ օլմալա-  
 րընա մանի՛ պիր շէյ սայմատը իսէ , պիզէ մախսուսէն  
 »էմր օլունմագքըզըն՝ օնլարըն սինինի վաֆթիզ օլմալա-  
 »րընա մանի՛ սայմաղա նէ՝ հագգըմըզ վար : » (Մեկն .  
 Մատթ . Աւետ . երես . 703 . էջ . 1 :

տեն պէտք եղած բանէն շատ տարբեր  
բան մըն է . և այս է այն մի միայն իրա-  
ւունքը՝ որ կարգիլէ՝ կ'ըսեմ, զանունք մը  
կրրտելը:

Հիմա Բերիացի Ազնուականնիս աս խօս-  
քերը լսելով՝ անանկ պատասխան մը կու-  
տայ , որ ոչ միայն մինչև հիմայ լսուած  
չ'էր՝ այլ և լսուելիք ալ չ'ունէր , թէ որ  
աշխարհի բարեբաղդու թիւնովը լոյս առած  
չ'ըլար .

«Վայց թէ որ ըսուի՝ թէ — կ'ըսէ —  
»մկրտութե համար հաւատք պէտք է ու  
»տղաք չ'են կրնար հաւատք ունենալ ,  
»վասնորոյ պէտք չ'է մկրտութիւն: Ա'պատաս-  
»խանեմ թէ՝ նմանապէս հաւատք հար-  
»կաւոր էր թլիատուելու համար:» (Մկր-  
տութեան ճառին մէջ . Երես . 99 .)

Ար գիրքին մէջ գրուած էր ասիկայ ,  
և ուր թալմուտի՛ն՝ չ'էնէ Աստուածա-  
շունչին մէջ . պէտք էր ցոյց տալ՝ իր խօս-  
քին հաստատութիւն տալու համար .

«Վարձեալ — կ'ըսէ — եթէ ըսուի թէ  
»տղաքը չ'են կրնար հաւատքը խոստովա-  
»նիլ , վասն որոյ պէտք չ'է որ մկրտութիւն:  
»Ա'պատասխանեմ՝ թէ ասանկ ալ խոստո-  
»վանութիւն հարկաւոր էր թլիատուելու .  
»ուստի պէտք չ'էր որ թլիատուելին:»

Բայց տղաքը թլփատուելու համար  
յայտնի հրաման կար, մկրտուելու համար  
չ'կայ, մէկ հատ մըն ալ չ'կայ:

«Մէկ խօսքով, — կ'շարունակէ — քիչ  
պատճառ որ հիմայ յառաջ բերուի հա-  
ւատացելոց տղաքը մկրտելու սովորու-  
թեանը դէմ, նոյնը կրնար շրէից ատե-  
նը յառաջ բերուիլ զանոնք թլփատելու  
սովորութեանը դէմ:» (Անդ, երես. 99.)

Թէ որ զրուցած համարձակ խօսքերուդ  
վրայ վստահ ես՝ ո՛քաջդ իմ, եկնու յա-  
ռաջ եկնու, որ հաստատութեան պատաս-  
խան տանք ու վերի զրոյցիդ, որուն դէմ  
կ'սեմ՝ նաև:

1. Մտուած բնաւ ըսած չ'ունի՝ և  
նչ մարդարէնեբուն բերնովը, թէ՛ Տէրոջը  
անունովը ՚ի թողութիւն մեղաց թլփատ-  
ուեցէք. իսկ մկրտութեան համար՝ հրամ-  
մէ՛ որ տեսնես. (Մարի. 16. 16. Գործ. 2.  
38. և 22. 16. Հով. 6. 3—4. Գալ. 3.  
27. Վաղ. 2. 12—14. Եբր. 10. 22. Ա. Պետ. 3.  
21. և այլն.)

2. Բողոքականները իրենց տղոցը ճա-  
շակել չ'են տար քրիստոսի անունով բաժ-  
նած հացերնին ու դինինին. պատճառելով  
թէ՛ նախ որոշել պէտք է սորվին. ուրեմն՝  
թէ որ տղայք առանց որոշելու հօրերնուն



տուներ կերած հացերնին միւս հացէն ու  
գինիէն՝ չ'են կրնար զանի ճաշակել նէ ,  
նմանապէս չ'են ալ կրնար մկրտուիլ առանց  
հաւատալու և հաւատքնին խոստովանելու :  
Թէ որ ասանկ չ'է կ'ըսէ , ուրեմն մկրտու-  
թեան համար հաւատք պէտքը չ'է . Թէ և  
սուրբ գրոց հակառակի աս բանը :

Ս'ենք կ'մկրտենք տղաքը , աւանդու-  
թեամբ սորված ըլլալով՝ որ Առաքեալք  
ալ կ'մկրտէին . և անոր համար՝ որ սկզբնա-  
կան մեղաց մէջ չ'մեռնին :

«Չ'է — կ'ըսէ հիմայ Ազնուականը , — ըս-  
տեալ սկզբնական մեղքին առաջին հետեանքը ,  
այսինքն Ադամայ մեղքին համար դա-  
տապարտութիւնը կ'վերցուի , քրիստոսի  
արդարութեամբ և ոչ թէ մկրտու-  
թեամբ . և ան միջոցը՝ որով քրիստոսի  
արդարութիւնը կ'վերցնէ ան դատա-  
պարտութիւնը , չ'է թէ մկրտութիւնն է ,  
հապա հաւատքը : «Վատապարտութիւն  
չ'կայ քրաստոս Յիսուսով եղողներուն .  
Հոով՝ 8 . 1 :» (Ղառ . Մր . Երեւ . 58 . )

Ուրեմն՝ թէ որ տղաք մեռնին՝ սկզբ-  
նական մեղաց տակ կ'մեռնին , վասն զի  
հաւատք չ'ունին . և թէ որ մեռնին՝ պիտի  
կորսուին , Ազնուականին վարդապետու-  
թեանը նայելով . Թէ և մկրտուած ըլլան

Հօր՝ և Որդւոյ՝ և Սուրբ Հոգիին անու-  
նովը: Աս ի՛նչ անգուժ է եղեր այդ մար-  
դը՝ որ խեղճ և անմեղ մանկտին դաժա-  
նաբարոյ սատանաներուն ձեռքը կ'մատ-  
նէ: մեղք . և ան անունին կ'ըսեմ, մեղք  
որ իրեն սեպհականել կ'ուզէ . այսինքն՝  
Ազնուականութիւնը, որ ատենօք Յերի-  
ացւոց տրուեր էր:

Մի, Բարեկամ, թող ատանկ չ'ըլլայ.  
Ոչ միայն հաւատքն է ան միջոցը՝ որ մեր  
սկզբնական մեղքը կ'վերցնէ, այլ և մկրտ-  
ուիլը . քանզի՝ թէ որ Քրիստոսի արդա-  
րութիւնը կ'վերցընէ, ուրեմն արդէն իսկ  
վերցած է. ըսել չ'եմ ուզեր թէ Քրիստո-  
սի արդարութիւնովը չ'վերցուիր, հապա՛-  
ընդունիլ պէտք է մեզի ան արդարութիւ-  
նը՝ ի Քրիստոս մկրտուելով՝ որ Քրիստո-  
սը վրանիս հագած կ'ըլլանք. (Գաղատ. 3.  
27.) «Թաղեալք ընդ նմին ՚ի մկրտու-  
մկրտութեանն, որով և ընդ նմին յար-  
եայք հաւատովք՝ Աստուծոյ ազդեցու-  
թեանն . » Ոչ միայն հաւատքով՝ այլ և  
ԹԱՂՈՒԵԼՈՎ. «Որ յարոյց զՆա ՚ի մե-  
ռելոց: Եւ զձեզ որ երբեմն մեռեալ  
էիք ՚ի մեղս՝ և յանթլիատութիւն մարմ-  
նոյ ձերոյ, կենդանացոյց յանձին իւրում,  
չնորհեաց մեզ զամենայն յանցանս մեր .

» և ջնջեաց զձեռագիր մերոյ հակառա-  
 » կութեանն հրամանօքն իւրովք: » (Սողոմ. 2. 12-14.)

Ասոնք ինչո՞ւ եղան, ո՞չ միայն հաւատա-  
 ըով, այլ և թաղուելով: Ինչո՞ւ համար թաղ-  
 ուելով. « թաղուեցանք Անոր հետ մկրտու-  
 » թիւնով մահուան համար: Ար ինչպէս  
 » Բրիատոս մեռելներէն յարութիւն առաւ  
 » Հօրը փառքովը, անանկ ալ մենք կենԱՅ  
 » ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՊՏԸՏԻՆԻ: »  
 (Հովհ. 6. 4.)

Ապա մենք՝ և մեր տղաքը կ'մկրտուինք,  
 ո՞չ միայն մեղաց թողութեան համար, այլ  
 և կենաց նորոգութեան մէջ պտրտելու  
 համար: Ար տեղ գրուած է թէ կենաց  
 նորոգութեան մէջ պտրտելու համար  
 թլփատուեցէք:

Դարձեալ կ'ըսէ՛ մեր Ազնուականը.  
 « Սկրտութիւնը ան բանն է հիմայ, ինչ  
 » որ թլփատութիւնը էր առաջ. այսինքն  
 » թլփատութեան տեղը գրուած է անիկայ:  
 » (Երես. 97.)

Չ'է, անանկ չ'է, մկրտութիւնը ան  
 բանն է հիմայ՝ ինչ որ ԲՐԻՍՏՈՍ ԸՆԵ-  
 ԼՈՒ ԷՐ. վասնորոյ՝ Փարիսեցիները ըսին  
 Յովհաննեսին. « Հապա ինչու մկրտու-  
 » թիւն կ'ընես, թէ որ դուն Բրիատոսը

„չ'ես . . . ” (Յ՝Կ. 1. 25.)

“Թլփատուծիր — կ'ըսէ նոյն Ազնուա-  
 ”կանը քիչ մը առաջ — օրինակ մը չ'էր որ  
 ”մկրտութիւնը անոր լրումը համարուի .  
 ”կամ շուք մը որ մկրտութիւնը անոր  
 ”մարմինը և ճշմարիտ էութիւնը ըլլայ . . .  
 ”քանզի աս երկուքը մէկ և հաւասար են  
 ”զօրութեամբ նշանանակութեամբ և հար-  
 ”կաւորութեամբ : ”

Հիմայ մենք ալ կ'հարցնենք , Թլփա-  
 տուծիւնը օրէնք էր , չ'ենէ ոչ : Պուցէ  
 ասոր ոչ չ'պիտի կրնայ ըսել . ուստի կ'պա-  
 տասխանեմ , Պօղոս Առաքեալ կ'ըսէ որ  
 “Օրէնքները գալու բարիքներուն շուքը  
 ”ունէին . ու չ'է թէ ան բաներուն բուն  
 ”կերպարանքները . ” (Եբր. 10. 1.) ուրե-  
 մըն՝ թէ որ Թլփատուծիւնը օրէնք մըն էր ,  
 ապա և շուք մը . և եթէ շուք՝ ապա և  
 խափանեցաւ՝ Քրիստոս Յիսուսով բուն իսկ  
 անոր էութիւնը դրուելով :

Կարդանք հիմայ Լուտերի մկրտութեան  
 օգտին վրայօք ունեցած կարծիքը .

Լուտեր . 3 “ Հ. Ի՞նչ օգուտ կ'ընէ մկր-  
 տութիւնը .

“Պ . Մկրտութիւնը մեղաց թողու-  
 ”թիւն կուտայ , մահէն ու սատայէն  
 ”կ'ազատէ . և յաւիտենական երանու-

»Թիւն կ'պարգևէ ամէն անոնց՝ որ կը  
 »հաւատան ինչ որ Աստուածային Խօս-  
 »քերը ու Խօսամուկները կ'հաստատեն»  
 (Երեւ. 27.)

Նշանաւոր հակասութիւն մըն է Լու-  
 տերի աս դաւանութեանը և Քրիստոսի  
 Խօսքին դէմ մեր Ազնուականին ըսելը .  
 «Մկրտութիւն հարկաւոր չ'է փրկութե .»  
 (Երեւ. 45.) Թէ որ մկրտութիւնը փրկու-  
 թեան հարկաւոր չ'է, և միայն « Քրիստոսի  
 »հնազանդ գտնուելու գործողութիւն  
 »մըն է» ինչպէս որ ուրիշ տեղ մը կ'ըսէ ,  
 »մենք կ'մկրտենք՝ վասն զի Ինքը այսպէս  
 »հրամայէր է մեզի .» (Երեւ. 60.) Ուրեմն  
 Քրիստոս փրկութենէ դուրս անհարկաւոր  
 գործողութիւն մը՝ սնտի ծէս մը և կոյր  
 հնազանդութիւն մը կտակ թողուց մեզի՝  
 աշխարհը թողած գացած ատենը . որոյ  
 հակառակ կ'տեսնենք Աւետարանին մէջ՝  
 որ ամէն մեզի տուած պատուէրներուն  
 մեջ մէյ մէկ օգուտ կան . և աս համբար-  
 ձած ատենը ինտոր կ'ըլլայ որ ասանկ ըն-  
 դունայն բան մը պատուիրէ: Թող երթան  
 փառք տան Աստուծոյ Անկնունքները՝ որ  
 ասանկ անունով ու բարբով Ազնուական  
 մը զիրենք արքայութիւն կ'խրկէ . և յի-  
 րաւի աղօթելու պարտական են իրեն հա-

մար՝ որ իրենց կ'բարերարէ . և բարեխօս  
ըլլալու են առ Աստուած՝ որ իր կորսնցու-  
ցածը կարենայ ձեռք բերել, որով կշռելու  
կարող ըլլայ իր խօսքերուն անբերելի ծան-  
րութիւնը , և տեսնայ՝ թէ Լուտեր ինչ  
կ'ըսէ իրէն հակառակ:

Լուտեր . 4 . « 2 . Որոնք են ան Աստ-  
» ուածային խօստմունքները .

« 11 . Անոնք որ Տէրն մեր Յիսուս քրիս-  
» տոս ըսաւ Մարկոսի վերջին գլուխը .  
» (16 . 16 . ) Ո՛վ որ կ'հաւատայ և կ'մկրտ-  
» ուի՝ պիտի փրկուի . իսկ ո՛վ որ չ'հաւա-  
» տար՝ պիտի դատապարտուի :

5 . « 2 . Ի՞նչպէս կարող է ջուրը ասանկ  
» մեծ բաներ ընելու .

« 11 . Ստոյգ է որ ջուրը չ'է աս բաները  
» ընողը , այլ՝ Աստուծոյ խօսքը որ ջուրին  
» հետն է . և հաւատքը՝ որ ջուրին վրայ  
» աւելցուցած Աստուծոյ խօսքին կ'հա-  
» ւատայ . . . » (10)

Ջուրը՝ ջուր է , Աստուած չ'է՝ որ մեր  
մեղքերը լուալու սրբելու և հոգինիս  
մաքրելու կարող ըլլայ . և իր պաշտօնն է  
միայն մարմինին անմաքրութիւնը լուալ

(10) Լուտերի աս հինգերորդ պատասխանին վրայօք  
խօսելու բաւական տեղի ունենալով Յ կտորի բաժնե-  
ջինք , որոց առջինը աս է :

և զերծ կացուցանել աղտերէն . բայց երբ որ անոր վրայ կ'աւելնայ Աստուածային Պատգամը, (Մարի. 16. 16.) որ կրակի ու ապառաժը կոտորող մուրձի պէս է. (Երեմ. 23. 29.) և ան հաւատքը՝ որուն առջին ոչինչ է անհնարին, (Մատթ. 17. 19.) և որով միայն կ'շարժինք 'ի թողութիւն մեզաց մկրտութիւն, ալ իր վրայ գերբնական զօրութիւնմըն ալ կ'կ'ցուի, որով լուացուողին սիրտն ալ նոյն զօրութեամբ կ'լուացուի. ինչպէս որ Լուտեր ալ կ'խոստովանի.

բ. « . . . Քանզի ջուրը առանց Աստուծոյ խօսքին՝ պարզ ջուր է, և մկրտութիւն չ'է . բայց Աստուծոյ խօսքը աւելցնելով՝ մկրտութիւն կ'ըլլայ . . . »

Հրէայք՝ մանաւանդ տեղացի այլազգիք այնչափ շատ անգամներով կ'մկրտուին՝ որ թէ որ իրարու վրայ հաշուելու ըլլանք նէ՝ կ'գտնանք որ գրէ թէ կեանքերնուն մէկ չորրորդ մասը աս գործողութիւնը ընելով անցուցեր են . աս չ'է ան մկրտութիւնը որով միանգամ միայն կ'մկրտուինք մենք . մեր մկրտուած ջուրը ան ջուրը չ'է, Լուտեր աղէկ կ'նկարագրէ մեր ջուրը.

գ. « . . . Այս է շնորհաց և կենաց վր-

»կաւէտ ջուրը . . . »

»Չուր մը՝ որուն հետ կապուած է  
Քրիստոսի ձրի շնորհքները . բայց նայէ  
Բողոքող մը ի՞նչ կ'ըսէ .

« 2 . Մարմինը մկրտութեան ջրովը լը-  
»ուացուելով սրտի փոփոխութիւն կ'ըլլայ  
»կարծողները տղէտ և խաբուած մարդիկ-  
»ներ չ'ե՞ն մի .

« Պ . Ա . յ . — կ'ըսէ ու Ա . Պետրոսի 3 .  
»21 համարն ալ իբրև վկայութիւն իր  
»խօսքին յառաջ կ'բերէ՝ սխալ թարգմա-  
»ներով — Որ անոր օրինակը մկրտութիւ-  
»նը՝ Յիսուս Քրիստոսի Յարութեան մի-  
»ջոցաւը մեզ հիմայ կ'փրկէ . չ'է թէ մար-  
»մինին աղտը երթալը՝ հապա բարի խղճ-  
»մտանքին առ Աստուած վկայութիւնը . »

(11) Անշուշտ՝ ճշմարտութիւն սիրողնե-  
րուդ հետաքրքրութիւնը պիտի շարժի  
հիմայ քննութիւն մը ընելու հաստատած  
խօսքին և բերած փաստին վրայօք . բայց  
նախ՝ պէտք է որ իր թարգմանութեանը

---

(11) « Քի օնուն թեմսիլե վաժթիզ՝ Յիսուս Քրիս-  
»տոսուն տիրիլմէսինին վասիթասըյըա պիզի շիմտի խե-  
»լաս էտէր . տէյիլ թէնին քիրինին կիտերիլմէսի՝ իլա  
»էյի զամիրին Ալահա թագրիբիչ » (Քիլիսէ իւզէրի-  
»նէ . Քրիսթիան թալիմաթը Քիթապընա իլավէ անուն  
տեւորին մէջ . երես . 44 . )



անհարազատութիւնը ցուցնենք՝ և ապա քննութիւն մը ընելով բերած փաստին ու իր խօսքին վրայօք՝ մեկզմեկու հակառակ ըլլալը:

Աս տաճիկերէն տետրակը շինողը՝ անտարկոյս իր աւետարանին վարդապետութեանը հաստատութիւն տալու համար Պետրոս Առաքեալին խօսքերը խարդախելու միջոցին ձեռք է զարկէր. միայն խարխրբելով պարզամիտներուն հաւտացընելու համար՝ որ մկրտութիւնը « Պարզապէս արտաքին նշան մըն է . » (Ազնուականին մկտութեան ճառին մէջ. Երես. 4.) Փոխանակ՝ որ « օ էօրնէք կիպի » կամ « օ թէմսիլ կիպի » « Ան օրինակին պէս » պիտի ըսէր, « օնուն թէմսիլի », « անոր օրինակը , կամ նմանութիւնը » կ'ըսէ . որ աս խօսքերէն քիչ մը առաջ Պետրոսին օրինակ բերած իրին տեղ ուրիշ խօսք մըն ալ ըլլալով բոլորովին կ'փոխուի խօսքը . և իր մտացածին վարդապետութիւնը հաստատութիւն առնելու տեղի կ'գտնայ:

Նախ կ'հարցնէ ինքը . « Մարմինը . . . » լուացուելով սրտի փոփոխութիւն կ'ըլլայ կարծողները՝ յիմար . . . չ'էն մի . » Ետեւէն « Այո՛ — կ'ըսէ՛ ու կ'յաւելը » ցընէ . — Որ անոր օրինակը (կամ նմա-

նութիւնը) մկրտութիւնը . . . » ինչին օրինակը կամ նմանութիւնը . « սրտի փոփոխութիւն ըլլալուն . » ուրեմն՝ եթէ չ'եմ սխալիր , իր թարգմանութիւնը աս միտքը կուտայ .

« Քի եիւրեք թէպտիւն յիշինին թէմսիլի վաժնիզ՝ Յիսուս Քրիստոսուն տիրիլմէսինին վասիթասըյրա պիզի շիմտի յիսէլաս էտէր . տէյիլ թէնին քիրինին կիտէրիլմէսի պիզի խէլաս էտէր , » քի վաժնիզին եափա յպիլէճէյի պուտուր . իլլա տէյի զամիրին Ալլահա էտէն թագրիտիր քի պիզի յիսէլաս էտէր . քի պունու վաժնիզ եափամազ , շիւն յքէնտի պիր թէմսիլ տիր : »

« Որ սրտի փոփոխութեան օրինակը (կամ նմանութիւնը) մկրտութիւնը՝ Յիսուսի Քրիստոսի յարութեան միջոցաւը մեզ հիմայ կ'փրկէ . չ'է թէ մարմինին աղտը երթալը մեզ կ'փրկէ , որ մկրտութեան ընել կրցածը աս է . հապա բարի խղճմը տանքին Աստուծոյ ըրած վկայութիւնն է որ մեզ կ'փրկէ . որ ասիկայ մը կրտութիւնը չ'կրնար ընել . որովհետեւ ինքը . . . օրինակ մըն է : »

Հիմայ բուն Պետրոսին խօսքն ալ մտիկ ընենք . « Որ ձեզ ալ ան օրինակին (այսինքն՝ Նոյի տապանին) պէս մկրտութիւնը պիտի ապրեցնէ . . . »

Ասանկ ալ՝ Անգղիական և ուրիշ երկիրներու մէջ սուրբ Գիրքերը տարածելու համար Անգղիոյ մէջ կազմուած ժողովքին ծախքովը 1819 = ին 'ի Բարիզ տպուած գիրն ալ շարադրութիւնն ալ տաճկերէն նոր կտակարանին մէջ ալ մե-

րինին համաձայն կ'գտնեմք.

1849 = ին 'ի Չմիւռնիա Աուլիէլմոս  
Արիֆֆիթի տպարանը տպուած մեր գրա-  
բառին համեմատ՝ բայց Յունարէնին հետ  
ունեցած տարբերութիւնները նշանակ-  
ուած աշխարհաբառ Նոր կտակարանն ալ  
մեզի պէս գրուած է՝ առանց տարբերու-  
թիւն մը նշանակուած ըլլալով. նոյնպէս

1844 = ին Մկրտիչ Միսիոնարին տպարա-  
րանը տպուած գրաբառ Նոր Ատակարա-  
նին մէջ ալ մերինին պէս է. բայց միայն՝

1843 = ին Աուլիէլմոսի Մամուլէն ելած  
գիրը հայերէն՝ շարադրութիւնը տաճկե-  
րէն՝ յունարէն բնագրէն թարգմանեալ  
ծանուցուած Նոր Ատակարանի մէջ ասանկ  
գրուած է. որմէ կ'հետեւի՝ որ նոյն քիլի-  
սէ իւզէրինէ. . . անուն տետրը շինող հե-  
ղինակը անկէ առեր է աս սրխալ թարգ-  
մանութիւնը ու հրատարակեր է.

Գանք հիմայ Առաքեալին և այս հեղի-  
նակին խօսքերը քննելու: Պետրոս կ'ըսէ.

«Որ և զձե՛զ ըստ նմին օրինակի, կեցուցէ  
»մկրտութիւնն. ոչ զմարմնոյ աղտն 'ի բաց  
»ընկելով, այլ զբարւո՛ք մտաց հանդես առ  
»Աստուած, 'ի ձեռն յարութեանն Յիսու-  
»սի Քրիստոսի . . . » որ օրինակին պէս,  
հարկ է գտնանք, լիսն զի թէպետ Պետ-

րոս «մկրտութիւնը ձեզ պիտի փրկէ» կը-  
սէ, բայց Բողոքողք հակառակութիւն կը-  
դնեն իրէն դէմ, թէ «Փրկութեան հա-  
մար մկրտութեան ապաւինողները պիտի  
կորսուին» .»

Առաքեալը անոր առջի համարին մէջ  
Նոյի տապանը օրինակ դնելով՝ «Որուն  
մէջ քիչերը՝ այսինքն ութը հոգիի չափ  
մարդիկ ջուրէն ազատեցան» կ'ըսէ, որոնք  
տապանին մէջը ըլլալուն համար չ'խղդուե-  
ցան . «Չեզ ալ ան օրինակին պէս մկրտու-  
թիւնը պիտի ապրեցնէ» կ'ըսէ, այսինքն,  
ինտոր որ Նոյի նաւը ան ութը հոգին պահեց  
որ ջուրէն չ'խեղդուեցան, անանկ ալ մկր-  
տութիւնը մեզ պիտի պահէ՝ որ չարին  
պատերազմներէն չ'յաղթուինք ու Ար-  
քայութեան աւետալի երկիրը ժառան-  
գենք Նոյի զաւկըներուն պէս՝ Յիսուսի  
Քրիստոսի յարութեան միջոցաւ: Այսին  
որոյ՝ Աւետարանին հակառակ բան է ըսե-  
լը թէ՝ «մկրտութիւնը սրտի փոփոխու-  
թեան արտաքին նշանն է» կամ «փրկու-  
թեան համար մկրտութեան ապաւինող-  
ները պիտի կորսուին» .» Եւ թէ որ դարձ-  
եալ պնդելով հակառակ կ'խօսին Քրիս-  
տոսի և Առաքելոց Խօսքերուն դէմ, մենք  
ալ Աւետարանին դէմ խօսողին ան ատեն

կ'պատասխանենք՝ երբ որ անհաւատներուն  
դէմ գրենք:

Նոյն Նրանելի Առաքեալը՝ Չուրին բը-  
նութեանը վրայօք ներկայ աղանդաւոր-  
ներուն ամպարչտական հայհոյութիւննե-  
րուն պապանձումն՝ և կարկումն իրենց  
լեզուներուն տալու համար՝ կ'յարէ իր  
խօսքերուն վրայ . «Ա՛չ զմարմնոյ աղտն ՚ի  
»բաց ընկելով . » քանզի Չուրը բնականա-  
պէս ան միայն կրնայ ընել , «այլ՝ » ուրիշ  
գործողութիւն կայ եղեր , «զբարւո՛ք» մը-  
»տաց հանդէս առ Աստուած , » ի՛նչ ընե-  
լով . սա՛ մի ըսել կ'ուզէ արդեօք Առաքեա-  
լը . «Սեցուցանէ զձեզ մկրտութիւնն՝ , ո՛չ  
»զմարմնոյ աղտն ՚ի , այն ընկելով , այլ ըզ-  
»հանդէս մաքրութեան մտաց ձերոց առ  
»Աստուած կայո-յանելով . » «Զի որ մի-  
»անգամ մկրտեցաք ՚ի Քրիստոս Յիսուս ,  
»ի մա՛հ՝ անդր՝ Նորա մկրտեցաք : . . . Զի  
»եթէ տնկակից եղեաք նմանութեան մա-  
»հու Նորա , այլ և յարութեան Նորա լի-  
»նիցիմք . . . » (Հո՛ով՛ճ . 6 . 3 . 5 . )

Պետրոսի խօսքերը՝ վերի զրուցած կեր-  
պովնիս հասկնալու համար՝ խօսքին կարգն  
ալ պարզութեամբ մեզի կ'վկայէ . «մկր-  
տութիւնը . . . մարմինին աղտը մեկդի ձը-  
գելով» չ'պիտի ապրեցնէ մեզի՝ կ'ըսէ .

հապա ի՞նչ ընելով. անշուշտ ուրիշ գործ ու  
 ղութիւն մը պիտի ըլլայ . և թէ որ սխալ  
 չ'ըլլար՝ սա գործողութիւնը իր խօսուած  
 քին բնական հետեութիւնն է . « մկրտու  
 ղութիւնը չ'է թէ մարմիններնուս վրայէն  
 աղտը մեկդի ընելով պիտի փրկէ մեզի ,  
 հապա (հոգիներնուս աղտը մեկդի ընե  
 ղով) բարւոյք մտաց հանդէսը առ Աստ  
 ուած (կ'տանի)՝ Յիսուսի քրիստոսի  
 յարութեան միջոցաւր . » Ուրեմն սա  
 խօսքը ան բողոքական ուսուցչին խօսքին  
 հետ քովէքով դնելնուս պէս , որ կ'ըսէ ,  
 « մարմինը մկրտութեան ջուրով լուացուե  
 ղով՝ սրտի փոփոխութիւն կ'ըլլայ կար  
 ծողները յիմար և խաբուած մարդիկներ  
 են . » դիւրաւ կ'հասկցուի սա խօսքե  
 րուն որո՞ւ դպչիլը . և մենք կ'կարճենք սա  
 քննութիւնը ընթերցողին թողլով ուղիղ  
 դատողութիւնը .

Անկիւլիքանք՝ որ բողոքականաց երևե  
 լի մէկ մասը կ'կազմեն , « Մեղաց թողու  
 ղեան համար մէկ մկրտութիւն մը (կը  
 ղնդունին) : » (Անկիւլիքան Եկեղեցի , ու իր  
 Հնութիւնը կոչուած տետրին մէջ . Երես .  
 47 . ) « Ես կ'խոստովանիմ — կ'ըսէ ուրիշ  
 տեղ մը — մէկ մկրտութիւն մը ՄԵՂԱՑ  
 ԹՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ : » Դարձեալ .

Մկրտութեան «Մատակարարութիւնը Ար-  
 »րակի և ուրիշ տօն օրերը ըլլալուն աւել-  
 »լի պատշաճաւոր ըլլալը պարտի ժողո-  
 »վուրդին ծանուցուիլ . . . Սակայն (թէ որ  
 »հարկը պահանջէ) տղայք ուրիշ օր ալ կրը-  
 »նան մկրտուիլ» (Գիրք հասարակաց ա-  
 դօթից . Անգղիոյ և Իռլանտիոյ միացեալ  
 եկեղեցւոյ կոչուած գրքին մէջ . Երես . 296  
 և 327 .)

Աս հարկին պահանջումը ինչ է՝ որ  
 տղայք պատշաճաւոր օրէն ՚ի զատ ու-  
 րիշ օր ալ կրնան կոր մկրտուիլ . վասն զի՝  
 «Անկլիքան եկեղեցւոյն դաւանութիւնը  
 »աս է որ՝ մկրտութեամբ տղան Բրիտո-  
 »սի եկեղեցւոյն անդամ կ'ըլլայ և որդե-  
 »գիր Աստուծոյ» (Անկլիքան եկեղեցի ու-  
 իր հնութիւնը . . . Երես . 48 .) Ընդ հակա-  
 ոակն՝ Արեւմտեանք մկրտութիւնը փրկու-  
 թեան հարկաւոր չ'է կ'ըսեն, ինտոր որ վե-  
 րը տեսանք . և տակաւին կ'պարծենան սուտ  
 պարծանքով մը «Աշխարհի մէջ Բրողես-  
 »դանթ եկեղեցիները որքան միաբան և  
 »համաձայն են քրիստոնէական վարդապե-  
 »տութեանը գլխաւոր նիւթերուն մէջ»  
 (Հաւաքումն դաւանութեանց . . . Երես  
 Ժգ .) Ըսել է որ մէկգմէկու միաբան չ'ե-  
 ղած բաները անհարկաւոր բաներ են . ու-

բեմն և մկրտութիւնը անհարկաւոր բան  
մըն է . ըստ որում մէկզմէկու հակառակ  
ալ կ'դաւանին: Ասանկ միաբանութեան  
մը վրայ մանկտին ևս ծիծաղելով կ'նայի.  
զի այդ միաբանութիւնը բոլոր քրիստոնէ-  
ից և Հեթանոսաց, և նոյն իսկ Հրէից հետ  
ալ ունին . ուրեմն ասոնք ամենն ալ (Աւե-  
տարարական) Բողոքական են, (որով Բողո-  
քական ըսելը՝ հաւատքը բանի տեղ չը-  
դնող ըսել կ'ըլայ.) վայ քեզ քաղաք, զի  
Թագաւորդ մանուկ է .

Անցնինք լուտիբի 5 = երրորդ պատաս-  
խանին մնացորդին .

դ. « . . . Այս է Հոգւով Սրբով նորէն  
» ծնանելու աւազանը . . . »

Սուտերի հակառակ սա պատասխաննե-  
րը կուտայ հիմայ մեր Բերիացի Ազնուա-  
կանը .

« Թէ որ մկրտութիւնը նորոգութիւն է  
» կամ նորոգութեան պատճառը ու հար-  
» կաւոր միջոցն է, ուրեմն կ'հետևի որ նո-  
» րէն ծնածները մարդու կամքէ ծնած են  
» . . . դարձեալ կ'հետևի որ երախաներուն  
» նորոգուիլը կամ չ'նորոգուիլը՝ ծնողացը  
» քահանային, և կնքահայրներուն կամքէն  
» կախում ունի . . . » (Երես. 32 — 33)

Աս ալ կ'պատասխանեմ . Թէ որ իրենց



ըսածին պէս միայն հաւատքն է նորոգութիւնը կամ նորոգութեան պատճառը և այլն, ուրեմն կ'հետևի որ նորէն ծնածները մարդու կամքէն ծնած են, (իր տրամաբանութեանը նայելով.) քանզի թէ որ մէկը իր հօրը կամ քահանային, և կամ կնքահօրը կամեցողութեանը համեմատ մը կրտուելով մարդու կամքէն ծնած կ'ըլլայ նէ, քարոզչին կամքովը եղած քարոզութիւնովն ալ մէկը քիստոսի հաւատայ նէ մարդու կամքէն ծնած կ'ըլլայ. և որ քարոզիչը կամ որև իցէ գիտնական մը կամք չ'ունենայ քարոզելու, պիտի կորսուի ան մարդը. . . և այլն.

Աւելիորդ նայելով, քարոզելու թէ որ Աստուած կ'շարժէ իր պաշտօնեան այսինչ մարդը հաւատացնելու համար, (որ ասանկով Աստուծոյ կամքը եղած կ'ըլլայ) Աստուած կ'շարժէ նաև ան պաշտօնեան որ մկրտէ զանիկայ, ըսել է որ աս ալ Աստուծոյ կամքովը կ'ըլլայ. ուրեմն մկրտողները չ'է թէ մարդոց կամքէն ալ Աստուծոյ ծնած են:

Սուրբ գիրքը մեզի կ'սորվեցնէ որ Աստուած ստեղծեց որչափ որ մարդիկ կան. և առանց իր կամքին տերև մըն ալ չ'շարժիր. բայց մենք հանապազ կ'տեսնենք որ մար-

դիկ մեկզմեկ կ'ծնին՝ իրենց ուղեւորը ,  
կրնանք մի ըսել թէ մարդիկ մեկզմեկ կը  
ստեղծեն և ան ալ անանց Աստուծոյ կամ-  
քին . և այլն . քաւ լիցի՝ Ասանկ խմացիք մը  
կըտու թիւնն ալ :

Դարձեալ կ'ըսէ Ազնուականը .

«Թէ որ միայն մկրտութիւնով կ'ըլայ  
»վերստին ճնունդը, ուրեմն բնաւ չ'մկրտ-  
»ուած մէկը՝ Աւետարանական հաւատք ,  
»սէր կամ հնազանդութիւն չ'կրնար ու-  
»նենալ . քանզի սուրբ Գիրքը կ'ըսէ .  
»Ամեն ով որ հաւատայ՝ թէ Յիսուսը  
»Քրիստոսն է . Աստուծմէ ծնած է՝ . բայց  
»մկրտութիւնը նորէն ճնանելու միջոց  
»համարողները կ'ըսեն թէ՝ «բնաւ չ'մկրտ-  
»ուած մէկը Աստուծմէ ծնած չ'է . Ու-  
»րեմն . . . բնաւ չ'մկրտուած մէկը չ'հա-  
»ւատար թէ Յիսուսը Քրիստոսն է .  
»Դարձեալ Սուրբ Գիրքը կ'ըսէ . Ամեն  
»ով որ կ'սիրէ՝ Աստուծմէ ծնած է . բայց  
»ասոնք կ'ըսեն թէ , բնաւ չ'մկրտուած  
»մէկը Աստուծմէ ծնած չ'է . Ուրեմն  
»բնաւ չ'մկրտուած մէկը չ'սիրեր» (Երեւ .  
33 — 34 .)

Այն , բնաւ չ'մկրտուած մէկը չ'սիրէր  
դԱստուած . վասն զի կ'ըսէ . «Թէ որ զիս  
»կ'սիրէք՝ Իմ պատու իրանքներս պահե-

„ցէք . . . Ա՛ն որ խմ պատուէրներս կ'բռ-  
 „նէ՝ ու կ'պահէ անոնք, Ա՛նիկԱ՛Յ է զիս  
 „սիրողը . . . Թէ որ մէկը գիտ կ'սիրէ՝ ԻՄ  
 „ԽՕՍ-ԲՍ կ'ՊԱՀէ . . . ” (Յ՞՛՛ 14. 15, 21,  
 23 . ) “Ա՛ն որ Ա՛նոր Խօսքը կ'ՊԱՀէ՝  
 „իրաւցնէ իր մէջը կատարեալէ Աստու-  
 „ծոյ սէրը . . . ” (Ա . Յ՞՛՛ 2 . 5 . ) “Եւ սէ-  
 „րը ասէ՝ որ Ա՛նոր Պատուիրանքին հա-  
 „մեմատ ԲԱԼԵՆՔ . . . ” (Բ . Յ՞՛՛ 6 . )  
 Ուրեմն՝ Թէ որ մէկը իր Խօսքը կ'պահէ՝  
 և իր պատուիրանքին համեմատ կ'մկրտ-  
 ուի՝ ան միայն է որ Ինքը կ'սիրէ . և Թէ  
 որ կ'սիրէ՝ ասպա և Աստուծմէ ծնած է . և  
 ան որ չ'մկրտուիր՝ ըսելէ որ իր պատուի-  
 րանը չ'պահէր, և Թէ որ չ'պահէր՝ ուրեմն  
 և Աստուծմէ ծնած չ'է .

Կրկին կ'ըսէ . “Եւ դարձեալ, Սուրբ  
 „Գիրքը կ'ըսէ . “Ամէն ո՛վ որ արդարու-  
 „թիւն կ'գործէ, Անկից (Աստուծմէ) ծը-  
 „նած է . . . բայց ասոնք կ'ըսեն Թէ՝ “բնաւ  
 „չ'մկրտուած մէկը Աստուծմէ ծնած չ'է . . . ”  
 „Ուրեմն բնաւ չ'մկրտուած մէկը արդա-  
 „րութիւն չ'գործէր” (Երեւ . 34 . )

Նիշդ ասանկ՝ ասոր պէս կ'խոստովանիմ  
 Վասն զի՝ պէտք է մկրտուիլնք՝ որ փրկու-  
 թեան հարկաւոր արդարութեան պատ-  
 ուիրանի մը անարգող չ'ըլլանք . պէտք է

Նմանող ըլլանք Պօղոսի՝ որպէս ինքն ալ  
 Քրիստոսի . (Ա . կորն . 4 . 16 . ) անոր պէս  
 մկրտուիլ պէտք է մեզի , և մեր մեղքե-  
 րը լուանալ , Տէրոջը Անուներ կանչելով .  
 (գործ . 22 . 16 . ) պէտք է մենք կատարե-  
 եալ ըլլանք՝ ինտոր որ մեր երկնաւոր Հայ-  
 րը կատարեալ է . (Մատթ . 5 . 48 . ) և քան-  
 զի «Ամեն կատարեալը իր վարդապէտին  
 »պէս կ'ըլլայ . » (Լուի . 6 . 40 . ) պէտք է  
 որ մեր վարդապէտին պէս մկրտութեան  
 արդարութիւնը կատարենք . «Թող տուր  
 »հիմայ — կ'ըսէ Տէրն մեր Յովհաննեսին ,  
 » — որ Բոլոր ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ կա-  
 »տարենք . » (Մատթ . 3 . 14 — 15 . )

Ի՞նչ որ մկրտութիւնը արդարութիւն է՝  
 ուրեմն ան որ մկրտուելով արդարութիւն  
 կ'գործէ՝ Աստուծոյ ծնած է . և ան որ  
 չ'մկրտուի , իր գործերը արդարութիւն  
 չ'է , որ անոնցմով արդարանալու յոյսը ու-  
 նենալով՝ կ'ուրանայ Քրիստոսի շնորհքու-  
 վը արդարանալու վարդապէտութիւնը . որ  
 ասիկայ կ'նշուի Հայաստանեայցս Սուրբ  
 Եկեղեցի . «Նշուի՞նք զԵւտիքէս , որ ուրա-  
 »նայր զշնորհքն Քրիստոսի արդարանա-  
 »լըն . » (12)

(12) Մաշտոցական ըլլալուս համար Մաշտոցէն բե-  
 ռինք աս վկայութիւնը :

Դարձեալ կ'ըսէ Ազնուականը: «Իայց  
 յԱռուներէիս իր մկրտուելէն առաջ Ար-  
 ղար, Բարեպաշտ և Աստուածավախ  
 ղամարդ էր, ողորմութիւններ կ'ըներ. որոնք  
 ղԱստուծոյ առջևը ելան յիշուեցան. ա-  
 ղմէն իժիր աղօթք կ'ըներ, և իր աղօթքը  
 «լսուեցաւ, և ինքը ընդունուեցաւ Աս-  
 ղաստուծմէ. Գործ. 16. 2 — 35. » (Ճառ  
 մկրտ. երես. 34.)

Միթէ Առուներէիսը իր բարի գործ-  
 քերոնն համար փրկեց Աստուած. քաւ-  
 լիցի. «Իր ողորմութիւնովը փրկեց մեզ  
 ղ (Առուներէիսն ալ Առաքեալներն ալ,  
 ղամենքսալ) Նորէն ծնանելու աւազանին  
 ղձեռքովը՝ ու Սուրբ Հոգիին նորոգելու-  
 ղովը. » (Տիտ. 3. 5.) «Չ'է՛ թէ մեր գործ-  
 ղքերովը, որ չ'ըլլայ թէ մեկը պարծենայ. »  
 (Եփես. 2. 9.):

Պետրոս՝ Առուներէիոսի հաւատքը՝ նաև  
 Սուրբ Հոգին անոր վրայ իջնալն ալ տես-  
 նելով՝ տակաւին իբրև փրկութեան հար-  
 կաւոր Մկրտիչ հրամայեց. (գործ. 10  
 1 — 48.)

Միթէ Սուրբ Հոգին չ'էր փրկեր զին-  
 քը ու բոլոր Պետրոսի խօսքերուն մտիկ  
 ընողները՝ անոնց վրայ իջնալուն: Չ'է՛, թէ  
 որ մկրտութիւնը չ'ընդունէին. քանզի

Սուրբ Հոգւոյն իջնալը անօգուտ կ'ընէին  
 Բրիտանի սլատուէրը անկատար ձգելով.  
 և զինքը տրամեցնելով իրենցմէ հեռանա-  
 լու տեղի կուտային: Այսին զի՝ «Եթէ որ  
 »նչ ծնցի 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ' (նչ միայն  
 »'ի Հոգւոյ' այլ և 'ի ջրոյ) նչ կարէ մտա-  
 »նել յարքայութիւնն Աստուծոյ:» (Յ՝Է.  
 3. 5.)

Ազնուականը կրկին կ'ըսէ.

«Թէ որ նորօգութիւնը մկրտութիւ-  
 »նով ըլլար, ուրեմն ամէն անոնք որ մկրտ-  
 »ուած են պիտի փրկուէին. վասն զի՝ ա-  
 »մեն անոնք որ Սուրբ Հոգիէն նորօգուած  
 »են կ'փրկուին. «Անոր սերմը իրենց մէ-  
 »ջը կ'մնայ.» (Երես. 36.)

Սաւուղ ուր գնաց. կարծեմ Հոգին  
 Սուրբ՝ ընդունող մէկն է: Ասոր վրայ կը-  
 խօսինք.

Ազնուա. «Անոնք չ'է՛ թէ ոմանց ըսա-  
 »ծին պէս Աստուծոյ ժառանգ կ'ըլլան, ու  
 »ետքը նորէն ժառանգութիւնը ստանա-  
 »լէն կ'զրկուին. . . .»

«Աստուած իր զօրութեամբը կ'պահէ  
 »զանոնք ան ժառանգութեանը. և ան ժա-  
 »ռանգութիւնն ալ անոնց համար կ'սպա-  
 »հէ.»

Աստուած բռնութեամբ ժառանգու-

Թեան չ'տանիր մեզի, վասն զի զմեզ անձ  
 նիշխան կացուցած է . ոչ ալ ան ժառանգ  
 գութիւնը բռնի մեզի կուտայ, բայց եթէ  
 երբ որ մենք ան ժառանգութիւնը ձեռք  
 բերելու համար ունեցած Անդրանկու  
 թեան իրաւունքնիս պահենք, ու չ'ծաւ  
 խենք աշխարհային շնչին բաներու: (Ժննդ.  
 25. 31 — 33.)

Մ'զնուա . «Բայց մէկ քանիները կան  
 »որոնք նորէն ծնած ըլլալ կ'երևնան ու  
 »եաքը ուրանալով իրենց հաւատքը մեզ  
 »քին կ'մեռնին ու կ'կորսուին . . . . Ա'տես  
 »նենք հանապազ բուն մեր աչքովը՝ որ  
 »մկրտութիւնը վերստին ծնունդ չ'արտադ  
 »րէր: Արքան անձինք կ'ճանչնանք մկրտ  
 »ուած, որոնք բնաւ վերստին ծնածի մը  
 »նշան չ'են ցուցներ:» (Երես. 38.) դարձ  
 եալ. «Ան (Աստուծմէ ծնած) անձը միշտ  
 »Աստուծմէ ծնած կ'մնայ . . . մէկը չ'կր  
 »նար այսօր Աստուծոյ որդին ըլլալ, ու  
 »վաղը Սատանային . » (Երես. 28 — 29.)

Աս իր խօսքին հակառակ Սաղմոսասա  
 ցը կ'ըսէ. «Մի ընկենաւր զիս Տէր յերե  
 »սաց քոց և զՀոգի Բո Սուրբ Մի ՀԱ  
 »ՆԵՐ յինէն:» (Սաղմ. 50. 13.)

«Եւ ասէ Տէր Աստուած . մի մնայի  
 »Ոգի իմ 'ի մարդկանդ յայդ միկ յաւիտ.

«եան . վասն լինելոյ դոցա մարմինս »  
 (Ճննդ . 6 . 3 .) ահա մարդիկ Սուրբ Հոգին  
 ունենալով մարմինի դարձեր են եղեր .  
 ինչպէս որ և նոյն ինքն Ազնուականը՝  
 որպէս թէ ինքն իրէն հակառակելով , Սուրբ  
 Գիրքէն իր խօսքին հակառակ վկայու-  
 թիւններ կ'բերէ . «Մարմինը կ'ցանկայ  
 » Հոգիին հակառակ , ու Հոգին մարմինին  
 » հակառակ . » (գաղ . 5 . 17 .) «Անանկ որ  
 » չ'է թէ բարին որ կ'ուզէք՝ կ'ընէք , հա-  
 » պա չարը որ չ'էք ուզեր՝ ան կ'ընէք . »  
 (Հովհ . 7 . 19 .)

Իր նոր տեսակ վարդապետութեանը  
 դէմ թէ Սուրբ Հոգին մեկ տեղ մը բնա-  
 կելէն ետքը ալ չ'դառնար , իր կրօնակի-  
 ցը ևս կ'հակառակի իրեն . «Արեւի է որ  
 կ'ըսէ՝ Սուրբ Հոգիին համար — Ինքը իր  
 » սրբազան ներգործութիւնը մեր սրտերէն  
 » դադրեցունէ . կարելի է որ Ինքը վշտա-  
 » նայ լու մեզմէ մեկդի ՔԱՇՈՒՒՅԻ յա-  
 » լիտեանս » (ք . տիպ քրիստ . վարդ . երես .  
 154 .) դարձեալ հարց պատասխանիի ձե-  
 ւով կ'ըսէ .

« Հ . Նոր որ Հոգին փոխէ մեր սիրտե-  
 » ըր , ան ատենը մեզ կատարելապէս սուրբ  
 » կ'ընէ մի . անանկ որ մենք բնաւ մէյ մըն  
 » ալ չ'մեղանչենք որչափ որ ապրելու ը-



» լանք .

« Պ . Է՛ք , հապա միայն կ'սկսի ան ա-  
 » տենը մեզ սուրբ ընելու : (13) Ինչո՞ւ որ  
 » շատ սխալմունքներ կ'ընենք ամենքս ալ  
 » . . . « Թէ որ ըսենք թէ մեղք մը չ'ու-  
 » նինք , ինքիրզինքնիս կ'խաբենք . ու մեր  
 » մէջը ճշմարտութիւն չ'կայ » : (Ա . Յ՞վ .  
 » 1 . 8 : Ա . Վ՞րնի . 9 . 24 - 27 . ) . . . . .  
 » Զգուշանանք ուրեմն Հոգին վշտացնե-  
 » լէն . քանզի՛ թէ որ Ինքը ՀԵՌԱՆԱՅ  
 » մեզմէ , ամեն բան կ'ըլլայ մեզի՛ խաւար  
 » ու մեղք , թշուառութիւն ու մահ : » (ք  
 տիպ քրիստ . վարդ . երես . 135, 136, 139 :)

Ուրիշ մ'ալ դատապարտութիւն կու-  
 տայ .

« Մ'ենք Սուրբ Հոգին ընդունելէն ե-  
 » տեւ կրնանք ան տրուած շնորհքէն զատ-  
 » ուիլ և մեղքի մէջ իյնալ . . . և այս պատ-  
 » ճառաւ դատապարտելի են անոնք որ կը-  
 » սեն թէ ալ անոնք չ'են կրնար մեղան-  
 » չել . » (գիրք հասարակաց աղօթից . . .  
 երես . 796 . )

Եւ յաչափ մեկզմեկու հակառակ զրոյց-  
 ներուն ո՞րը իբրև ճշմարիտ և ուղիղ ըն-

(13) Աս հակառակ զրուցուածքը Ազնուականն ալ  
 իրեն դէմ ըբեր է . (տես . երես . 13 . )

դու՛նելու է . թէ որ աս ամենը միևնոյն էութիւնը ու միաբանութիւնը ունին կ'ըսուի հաւատոյ դաւանութեան , ըսել կ'ըլլայ որ ջուրը և հուրը 'ի մի կ'միաբանին , օգը և հողը , երկաթը ու փայտը . և այլն . և աս ամենը մէկ բնութիւն ունին : Այժմ 'նչ իրաւ կ'ըլլայ ըսելք նէ որ , « Արքան մարդիկներէ կ'բաղկանայ Բողոքականութիւնը՝ այնքան ալ կարծիքներէ կ'բաղկանայ իրենց վարդապետական դրութիւնը : »

Ահսինք հիմայ մեր կարճառօտ պատասխանը տալու . աս նորահնար կարծիքին դէմ :

Դաւիթ մարգարէն Սուրբ Հոգին ընդունած չ'էր . անուրանալի կերպիւ , ևս նոյն Ազնուականին համար . որ իր խաբէական ընթացքովն ալ աս ճշմարտութեանս առջևէն փախուստ տալու ճամբայ մը չըպիտի դտնայ , ոչ ալ ծակուկ մը պահուելու համար . քանզի « Տէրօջը Հոգին Դաւիթի վրայ իջաւ . . . » (Ա. Թագ . 16 . 13 . ) ուստի չ'պիտի մեղանչէր՝ մեր Ազնուականին ըսելուն նայելով . բաց Աւրիայ Քեօացիին կնկանը Բերսարէին հետ շնութեան մեղքին մեջ ինկաւ անգամ մը . (Բ. Թագ . 11 . 2 — 4 . ) և իր յանցանքը առ յաջս մարդ .

կան ծածկելու համար՝ (որ առ այլ մեղք մըն է, առջինին հաւասար, ) խորամանկութիւն բանեցնելով ձեռք զարկած բանը չ'յաջողեցաւ նէ՝ մեռցնել տուաւ պատերազմի մեջ խեղճ Ռւբիան, (Անդ . 11 . 2—17 .) Ահա սարսափելի մեղք մըն այլ գործեց ան նոյն Դաւիթը՝ որ Սուրբ Հոգին ընդունելու էր:

Կարծեմ «Աստուծոյ Հոգին անոր (Սաւուղին) վրայ իջաւ . » (Ա . Թագ . 10 . 10 .) բայց յորժամ տրամեցոյց՝ «Վերացաւ Սուրբ Հոգին Սաւուղէն:» (Անդ . 16 . 14 . և 18 . 12 .) Ռւբեմն պիտի կրնանք հետեցնել առ օրինակներէն որ Սուրբ Հոգին ընդունողներն անգամ երբեմն կրնան մոլորիլ ու մեղանչել՝ թէ որ անոր չ'լսեն, և 'ի մահ ևս մատնուիլ Հոգւով և մարմնով՝ ետքի օրինակին պէս . 'ի սկզբան Որդի Բարձրելոյն ըլլալ, և առ յապայն՝ որդի գեհենին՝ տրամեցնելով զնա, Որդի Սատանայի՝ և ամեն արդարութեան թշնամի Նչպէս որ մեկ օրինակն այլ ծննդոց 6 գլուխին մէջ կ'տեսնուի . «Որդիք Աստուծոյ» (համար 2) «մարմին» եղան . (համար 3 .) «Եւ ամենայն ոք խորհէր 'ի սրտի իւրում խնամով 'ի չարիս զամենայն աւուրբս:» (համար . 5 .) Ռւստի կ'մնայ հիմայ

այն Ազնուականին՝ որ իր ծուռ և Աւետարանին հակառակ սկզբունքը հաստատելու համար՝ թէ հաւատացեալք մկրտուելով վերստին չ'են ծնիր՝ որովհետեւ կ'մեղանչեն, ուրիշ ցոյցեր և փաստեր բերէ սուրբ գիրքերէն: Քանզի մենք Առաքելական խրատուն հետեւելով կ'ընդունինք որ վերստին ծնեալներն ալ կրնան մեղանչել, և աշխարհ սիրելու դառնալ:

Սովսէս Մարգարէմը չ'էր. և մեծ քան զամենայն մարգարէս. ահա՛ անհաւատութիւն ըրաւ Աստուծոյ խօսքին. (Թուոց. 20. 10.) Ահարօնին հետ, և պատժուեցան՝ որ Աւետեաց երկիրը չ'մտան. (Անդ 12. համար.) Յովնան ալ Մարգարէ չ'էր. և ահա Աստուծոյ դէմ մեղք մը գործեց. ուզեց փախչել իր երեսէն. (Յովնան. 1. 3.) և Նինուէ քաղաքը չ'կործանելուն համար տրտմելով յուսահատական խօսքերով աղօթելուն մեղանչեց. (Անդ. 4. 1 - 3.) Եւ ինչ եղաւ Յերոբոամ Իսրայելացւոց Թագաւորին Աստուծմէ պատգամ բերող Աստուծոյ այրը. (գ. Թագ. 13. 1 - 24.) Մինչև անգամ Աբրահամը՝ Աստուծոյ խօսքին հաւատք չ'բերել ցուցուց տեղ մը. (Ծննդ. 17. 17.) և մինչեւ մեր Նախահօրը Ադամին ալ նայինք

նէ՛ որ Աստուծոյ ձեռօքը հողէն ստեղծ-  
ուեցաւ և Անոր փչած կենդանութեան  
շնչովը ոգի կենդանի եղաւ, (Ճննդ. 2. 7.)  
կնկանը՝ և կնիկն ալ օձին լսելովը մեղան-  
չեց. (Անդ. 3. 1 - 6.)

Դեմաս ո՛վ էր. եթէ ոչ վերստին ծըն-  
եալ հաւատացեալ մը: Վերստին ծնած՝  
ըսինք, վասն զի գրեթէ անհաւատալի բան  
մը կ'երևնայ որ Պողոսի Աշակերտը ըլլայ  
և մկրտեալ ու դրոշմեալ չ'ըլլայ. թէ որ  
Սուրբ Հոգւով վերածնեալ չ'էր՝ ինչպէս  
կրնար Պողոսի գործակից ըլլալ Աւետա-  
րանի քարոզութեանը. (Փիլիմոն. 24.)  
Այո՛ գործակից էր Պողոսի՝ և վերանորոգ-  
եալ, բայց և այնպէս՝ թողուց Պողոսը ու  
անոր գործակից ըլլալը՝ «Աշխարհը սի-  
րեց. » (Ք. Տիմ. 4. 9.) Անտարակոյս՝  
Պողոս ալ ասոր վրայօք խորհելով՝ թէ ինչ-  
պէս Սուրբ Հոգին տրամեցուց ջրէն ու  
Հոգիէն ծնելէն ետքը, խրատ կուտայ մե-  
զի. «Աստուծոյ Սուրբ Հոգին մի տրամե-  
» ցնէք, որով կնքուեցա՛ք դուք փրկու-  
» թեան օրը. » (Եփես. 4. 30.) Ո՞րն է աս  
փրկութեան օրը, որ Առաքեալը կ'ըսէ.  
մկրտուած օրերնիս՝ չ'էնէ ծնած, կամ  
Քրիստոսի խաչուած՝ թաղուած և յա-  
րութիւն սուած օրը: Գուրէն՝ ու Հոգի-

էն՝ ծնած օրերնիս:

Հիմայ մեր Ազնուական Բերիացին Պօղոսի առ կորնթացիան դրած առ Թղթին 1 գլ. 14 և 16 համարները մէջ բերելով, այսինքն «գոհութիւն իմ Աստուծոյս», որ «ձեզմէ մէկը չ'մկրտեցի, միայն թէ Ար-  
րիապօսը ու Գայիօսը . . . և Ստեփանէին  
ընտանիքը», կ'ըսէ:

«Ուստի՝ գոհութիւն կուտայր Աստու-  
ծոյ՝ թէ ինքը նորէն ծնանելու միջոցը  
չ'եղաւ անոնցմէ մէկուն . . . Մկրտու-  
թիւր մերտաին ծնունդ սեպուելու է նէ,  
Պօղոս գոհութիւն կուտայ Աստուծոյ թէ  
ինքը միայն անոնցմէ մէկ քանին մերտ-  
աին ծնաւ . և անմիջապէս ալ կ'յարէ .  
ինչո՞ւ որ Քրիստոս զիս մկրտելու չ'խր-  
կեց, հապա Աւետարանը քարոզելու .  
(համար . 17 .) և Գարձեալ . 'Քրիստոս  
Յիսուսով ես ձեզ ծնայ Աւետարանովը,  
(գլ. 4 . 15 .) Պօղոս . . . իրան կորնթոսի  
մէջ շատերը ծնաւ նոր կեանքի մէջ  
Սուրբ Հոգիովը . . . բայց անոր գործա-  
ծած միջոցը չ'է թէ մկրտութիւնն էր,  
հապա ճշմարտութեան խօսքին քարո-  
զութիւնը, Աստուծոյ Աւետարանը և  
խօսքը» (Երեւ. 10 .)

Ըս խօսքերուն ինչ ըսենք . ուրեմն

մկրտելը պարանայ բան է եղեր. Պետրոս կը  
 մկրտէր և հաւատացեալներուն մկրտութիւ  
 կ'հրամայէր ու կ'յորդորէր նէ՛ (գործ . 2 .  
 38 .) և անոր քարոզութեանը մտիկ ընող  
 ներէն «Տմանք սրտանց ընդունելով անոր  
 »խօսքերը՝ մկրտուեցան» նէ՛ որոնք երեք  
 հազար հոգիի չափ մարդիկ էին . (գործ .  
 2 . 41 .) նոյնպէս Փիլիպպոսի քարոզութեա  
 նը հաւատացող «էրիկ մարդիկ ու կնիկ  
 »մարդիկ ամէնն ալ կ'մկրտուէին» նէ՛ ,  
 (գործ . 8 . 12 .) անանկ ալ նոյն ինքն Պո  
 ղոսին ու Շիղային քարոզութեամբը Քան  
 տապետը «Շուտ մը» իրեններուն հետ  
 «մկրտուեցաւ» նէ՛ (գործ . 16 . 30 — 35 .)  
 «Լիդիա անուն կնիկ մը . . . որուն սիրտը  
 »Տէրը բացաւ Պօղոսին ըսածներուն ու  
 »շաղթութիւն ընելու . . . ինքը ու իր տու  
 »նը մկրտուեցաւ» նէ՛ (գործ . 16 . 14 —  
 15 .) և վերջապէս Պօղոսի քարոզութիւ  
 նը «Արնթացիներէն շատերը լսելով հա  
 »ւատացին ու մկրտուեցան» նէ՛ (գործ .  
 18 . 8 .) գուցէ՛ Հրէական մկրտութեամբ  
 մկրտուեցան կ'կարծէ: Ի՞նչ կ'ըսէ արդ  
 եօք Ազնուականը . Պօղոս մկրտութիւնը  
 պարանայ բան կ'կարծէր . և թէ որ ասանկ  
 կ'կարծէր , Արիստոսն ու Գայիոսը և Ստե  
 փանէին ընտանիքը ինչո՞ւ մկրտեց . թէ որ

հարկ կ'սեպեր նէ՝ ինչո՞ւ ուրիշներն ալ  
 չ'մկրտեց . և չ'մկրտելուն վրայ ալ կ'պարծիս  
 Քրիստոս զինքը մկրտելու չ'խրկեց, վերի  
 ըսուած մարդիկը ինչո՞ւ մկրտեց: Գպրա-  
 տան տղայք երբեմն ձեռքերնուն գիրքե-  
 րը շուտով լմնցնելու համար՝ առանց  
 կարդալու՝ մեկ քանի թուղթեր մէկէն  
 կ'դարձունեն . ետքը ուրիշներուն ալ ա-  
 նանկ կ'կլնեցնեն՝ որ ամբողջ կարդացեր են  
 գիրքերնին . մեր Բերիացի Ազնուականն ալ  
 գուցէ 'ի մանկութենէ ասանկ վարժած  
 ըլլալով Գործոցը լման չ'կարդացած կո-  
 րնթացւոց թղթին կ'ցաթկէ . բայց իր վը-  
 րայ առած Ազնուական անունը չարատա-  
 ւորելու համար կ'հրաւիրեմ զինքը՝ որ  
 Գիրքերը աղէկ մը կարդայ՝ և անկից ետ-  
 քը ելէ աս նիւթիս վրայօք ձառելու ,  
 և մեզի հասկցնելու մկրտութեան հար-  
 կաւոր կամ անհարկաւոր, վերստին ծնունդ՝  
 կամ ընդունայն ծես մը ըլլալը: Իսկ մենք՝  
 Պօղոսի ան խօսքերուն՝ որ կ'ըսէ թէ «Յի-  
 սուս Քրիստոսով ես ձեզ ծնայ Աւետա-  
 րանովը» կ'ըսենք որ՝ ասկէ չ'խմացուիր թէ  
 մկրտութիւնը վերստին ծնունդ չ'է . եթէ  
 ո՛չ ուրեմն ի՞նչ ըսել ուզեց Քրիստոս  
 «Եթէ ոք ո՛չ ծնցի 'ի ՋՐՈՅ» և այլն ըսե-  
 լովը: Պօղոս՝ քարոզեց Աւետարանը՝ զի



ան բանին համար փրկուած էր . և անոր  
խօսքին լազները վերստին ծնան՝ ջրով և  
Հողւով : Մինչև որ մեկ մարդ մը օրէնք  
մը պատուէր մը Չ'ԼՄԷ՝ նէ՝ զանկայ չը-  
կրնար պահել . ուստի՝ Պողոս անոնց լսել  
տուալ Աւետարանին վարդապետութիւ-  
նը՝ անոնք ալ մկրտուելով վերստին ծնան :  
Հիմայ քանի մը խօսք ալ Յօհաննու  
վերի գրուած խօսքին վրայ խօսինք .

«Ի՞ժէ որ ոչ ծնցի 'ի ջրոյ և 'ի Հող-  
ւոյ , ոչ կարէ մտանել Արքայութիւնն  
«Աստուծոյ» (Յովհ. 3. 5.)

Պարտինք ծանր և ուշի ուշով քննելու  
աս խօսքերը . որ չ'ըլլայ թէ Հրէից արք-  
ուած յանդիմանութենէն մեզի ալ բաժին  
ելէ . Եսայեսց մարդարէութիւնը մեր վը-  
րայ կատարուելով . «Ականջօք իւրեանց  
«ճաննուա լուան . և զաչս իւրեանց կա-  
«փուցին , զի մի երբէք տեսցեն աջօք՝ և  
«ականջօքն լուիցեն՝ և սրտիւքն խնայցին .  
«և զարձօին . » (Եսայ. 6. 10. Մատթ. 13.  
15.)

«Ի՞ժէ որ մեկ մարդ մը չ'ծնի — կ'ըսէ ,  
«ո՞ւրիկէ , — ջրէն ու Հողիէն , չ'կրնար Աս-  
«տուծոյ Արքայութիւնը մտնել . » այսին-  
քն , թէ որ մեկ մարդ մը ջրէն չ'ծնանի ,  
ու նաև Հողիէն չ'ծնանի , չ'կրնար փրկու-

իլ. միայն «ջրէն ծնանիլ» կամ միայն «Հո-  
 »գիէն ծնանիլ» չ'ըսէր, «ջրէն ու Հոգի-  
 »էն» ըսելով երկուքն ալ ունենալու պար-  
 տաւորութիւննիս կ' յայտնէ. և առ համա-  
 ըր աղէկ մը հասկընալու համար պէտք է  
 գիտնանք թէ

1.Նչէ վերստին ծնունդը կամ վերս-  
 տին ծնանիլը:

Թէ որ խօսուածքին ձևը ու միտքը աղէկ  
 մը ըմբռնենք, կ' գտնենք որ մէկ պզտիկ  
 ցորէն մը փատելու համար երկրին ծոցը  
 դնելնուս ինտոր պտղաբեր կ'ըլլայնէ,  
 անանկ ալ մէկ պզտիկ բանով մը Աստուած-  
 պաշտութեամբ առատանալու և հարստա-  
 նալու ենք: Ինտոր որ ցորէնը երկրի ծոցին  
 մէջ իր ծնունդը կ'կրկնէ աւելի առատու-  
 թեամբ. անանկ ալ մեր մարմնաւոր ծնուն-  
 դը հոգեորի փոխուելով հանդիսաւոր ա-  
 ռաքինութիւններու ծնունդներ յառաջ  
 պիտի բերէ՝ տնկակից քրիստոսի ըլլալով  
 յաւազանին, (Հռովմ. 6. 5.) որ Անոր պէս  
 ալ յարութիւն կ'առնենք, այոխնքն, վերս-  
 տին կ'ծնինք նոր կեանքի մը մէջ քալելու.  
 բայց երբ չարին ազդմանցը հակամիտինք,  
 մեր ծննդեան ծաղիկներն ալ կ'թողմին,  
 տերեւները կ'թափին, և վերջապէս տապա-  
 ըով կտրուելով հուրը կ'ձգուինք անպը-

տուղ (Մատթ. 3. 10.) և չորացած ծառեր  
բուն պէս:

Աս ծնունդը՝ առանց հաւատքի չըլ-  
լար. վասն որոյ՝ ան որ հաւատք ունի՝  
միայն անիկայ կ'ծնի ջրէն ու Հոգիէն.  
այսինքն՝ ան որ հաւատայ՝ ՚ի թողութիւն  
մեղաց կ'մկրտուի, և Հոգւով սրբով կը  
նորոգուի. Սողոսի աչուրները բացուելուն  
պէս՝ «Տեսաւ՝ ու ելաւ մկրտուեցաւ.»  
(Գործ. 9. 19.) որմէ կ'թելադրուինք ըսե-  
լու՝ թէ Առաքեալը իբրև փրկութեան  
հարկաւոր մկրտուել ապսպրեր է իրեն.  
Ինչպէս որ ինքն ալ Հրեաներուն առջին  
խոստովանեցաւ. (Գործ. 22. 12 — 16.)  
Քանզի Տէրը առաջուրնէ խոստացեր էր  
անոր որ ընել հրամայուած ամէն բաները  
պիտի զըուցուի իրեն. (Անդ. համար. 10.)  
Ի՞նչ որ մկրտութիւնը միայն ջրով լուաց-  
ուելու արտաքին գործողութիւն մը և կոյր  
հնազանդութիւն մըն էր, պէտք չ'էր այս-  
քան եռանդուն քարոզութիւն մը ըլլար  
զանի շոյտ ընդ փոյթ կատարելու համար:  
Անիկայ ծնունդ մըն էր վերստին, և Տէրը  
ըսաւ որ՝ ԶՐՈՎ ու Հոգիով ըլլալու էր.  
ուստի ան մարդուն վերստին ծնաւ կ'ըս-  
ուի՝ որ երկուքէն ալ ծնած է, ան որ կ'ը  
հաւատայ՝ հաւատարուն համար կ'մկրտ-

ուի, ջրով և Հոգւով վերափին ծնելու հա-  
մար. և որ չ'մկրտուիր՝ չ'հաւատալուն հա-  
մար է, որ և չ'ծնիր վերափին. և թէ որ 'ի  
սկզբան Հոգին սուրբը ընդուներ է, արտ-  
մեցրելով կ'հեռացրնէ իրմէն, պատճառն  
որ՝ անհաւատութիւն ցուցուց. կրօնե-  
լիս՝ մկրտուելէն առաջ սուրբ Հոգին ա-  
ռաւ. բայց իբրև փրկութեան հարկաւոր՝  
ուրիշ հրաման մ'ալ առաւ Պետրոսէն՝ որ  
իկրք ու իր առնը եղողները «Յիսուսի  
» քրիստոսի անունովը մկրտուին:»

Հիմայ ասոնց համար մեր Ազնուականք  
սա խօսքերը ըսելով իր մտքին ցնորսած ը-  
լալը աղէկ մը կ'յայտնէ.

«Անոնք ընդունած էին Սուրբ Հոգին,  
» և վերափին ծնած էին Սուրբ Հոգիէն.  
» ուստի և կրնային մկրտուիլ՝ իսկ թէ որ  
» Սուրբ Հոգին ընդունած չ'ըլլային, իր-  
» ունի պիտի չ'ունենային մկրտելու:»  
(Երև. 52 - 53.)

Ըսել է որ Սուրբ Հոգին դեռ չ'ընդու-  
նողները բնաւ մկրտուելու իրաւունք չ'ու-  
նին. ուրեմն կ'հարցունեմ մեր Ազնուա-  
կանին, Գուն Հոգին Սուրբ առա՛ծ էիր,  
և Հոգին Սուրբէն նորէն ծնա՛ծ էիր երբ  
որ մկրտուեցար. չ'է նէ սա արատնութիւ-  
թիւնը միայն քեզի արուեցաւ:

Մեր Սուրբ Գիրքին մէջ կ'ըսենք՝  
 որ շատերը և գրեթէ առ հասարակ ամէն  
 մարդ՝ մէկ երկու հոգիէն զատ՝ որոնք  
 առանձնաշնորհութեամբ Աստուծոյ պար-  
 գեներովը յառաջ քան զմկրտութիւնն  
 լեցուեցան, մկրտութիւնէ ետքը Առաքելոց  
 ձեռնադրութեամբը Հոգին առին:

Լսեցուցի մէջ մէկ քանի աշակերտներ  
 Պօղոսի խօսքերը «Երբ որ լսեցին, Տէր  
 »Յիսուսի Անունովը մկրտուեցան: Լու  
 »Պօղոս երբ ուր ԱՆՈՆՑ ՎՐԱՅ ՁԵՌԲ  
 »ԴՐԱԻ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՆՈՆՑ ՎԸ  
 »ՐԱՅ ԵՎԱԻ:» (գործ. 19. 5 - 6.)

«Առաքելները երբ որ լսեցին թէ  
 »Սամարիա ալ Աստուծոյ խօսքը ընդունե-  
 »ցին, Պետրոսը ու Յովհաննէսը անոնց  
 »խորհեցին. որոնք իջան՝ աղօթք ըրին ա-  
 »նոնց վրայ, որ Սուրբ Հոգին՝ առնեն:  
 »(ինչու որ մինչև ան ատենը դեռ անոնց  
 »մէ մէկուն վրայ իջած չ'էր. հասցա մի-  
 »այն Տէր Յիսուսի անունովը մկրտուած  
 »էին.) Ան ատենը ձեռքերնին անոնց վը-  
 »րայ դրին՝ ու Սուրբ Հոգին կ'առնէին:»  
 (ԱՆԴ. 8. 14 - 17.)

Թէ որ առանց Սուրբ Հոգին ընդուն-  
 նելու որևիցէ մէկը մկրտուելու արտա-  
 նութիւն չ'ունի, ուրեմն մանկտուոյն ան-

հնարին կ'ըլլայ բոլորովին մկրտուելը . քանզի  
 անոնք հաւատք չ'ունին , և թէ որ հաւատք  
 չ'ունին՝ չ'են կրնար Սուրբ Հոգին առած  
 ըլլալ . և վասնորոյ՝ չ'ենք ալ կրնար մկրտել  
 իր դրութեանը նայելով : Ինդ հակառա-  
 կըն՝ մենք կ'ընդունինք՝ որ ամէն ո՛վ որ  
 ըլլայ՝ դրոշմը առնելուն կ'առնէ Սուրբ  
 Հոգին . միայն հաւատալով մէկ մարդ մը  
 Հոգիէն չ'կրնար ծնանիլ : Պօղոս Եփեսոսի  
 մէջ « Քանի մը աշակերտներ գտնելով ,  
 » ըսաւ անոնց . Երբ որ Հաւատացիք՝  
 » Սուրբ Հոգին առիք արդեօք . Անոնք ալ  
 » ըսին իրէն , բայց մենք լսած ալ չ'ենք  
 » թէ Սուրբ Հոգի կայ : և ըսաւ անոնց .  
 » Հասցա ինչով մկրտուեցաք . » (Գործ .  
 19 . 1 - 3 . ) ահա՛ Պօղոս յայտնի կ'ցու-  
 ցընէ աս խօսքերովը՝ որ ջրով մկրտուելով  
 Սուրբ Հոգւով ալ կ'մկրտուի ան մարդը՝  
 որ կ'հաւատայ : Արեւմն չ'է թէ մկրտուե-  
 լու իրաւունք ունենալու համար Հոգին  
 Սուրբ կ'առնենք , հասցա՛ Հոգին Սուրբ  
 առնելու համար կ'մկրտուինք : Իայց թէ  
 որ ասանկ չ'է կ'ըսէ , մինչև որ իր վարդա-  
 պետութիւնը աղէկ մը չ'հաստատէ նէ՝  
 մերը շիտակ կ'մնայ , ինտնոր որ իրենցմէ  
 մէկը ըսէր էր :

Կարդանք հիմայ Լուտերի 5 երրորդ պա-

տասխանիին է մասը .

Մուտեր . է . « Ինչպէս որ Պօղոս Առաք-  
 » եայ ըսաւ Տիմոթի ք . 5 . Իր ողորմու-  
 » թիւնովը մեզ փրկեց նորէն ծնանելու  
 » աւազանին ձեռքովը՝ ու Սուրբ Հոգիին  
 » նորոգելովը . որ մեր վրայ լեցուց առա-  
 » տորէն Յիսուս Քրիստոս մեր փրկիչին  
 » ձեռքովը , որ շնորհքով արդարացած՝  
 » յաւիտենական կեանքին յուսովը ժա-  
 » ոանգ ըլլանք : Աս խօսքը ճշմարիտ է :  
 (Եբե . 28 . )

Առաքեալին աս խօսքին ալ սանկ մեկ-  
 նութիւն մը կուտայ մեր Բերիացին .

« Հիմայ թէ որ աս « նորէն ծնանելու  
 » աւազանին » խօսքը մկրտութեան վերա-  
 » բերութիւն մը ունի . . . բայց Առաքեա-  
 » լը չ'ըսեր թէ ան աւազանը՝ այսինքն ան  
 » մկրտութիւնը նորէն ծնանելու է կամ նո-  
 » րէն ծնանել կ'պատճառէ , այլ թէ անի-  
 » կայ նորէն ( ծնանելու աւազանը կամ  
 » մկրտութիւնն է : Իսել կ'ուզէ , չ'է թէ  
 » Յովհաննէսին քարոզած ապաշխարութեան  
 » կամ որ և իցէ Հրէական վարդապետու-  
 » թեան մը մկրտութիւնն է , հասցա թէ նո-  
 » րէն ծնանելու վարդապետութեանը »  
 (Եբե . 7 — 8 . )

Չ'է , Պարոն վարդապետ , ասանկ չ'է .

ան աւագանը՝ նոյն իսկ նորէն ծնանելու  
աւագանն է . ինչպէս որ ասոր վրայօք հիմայ  
խօսեցանք քիչ մը վերը , և քիչմ'ալ վարը  
կրկին պիտի խօսիմք .

Մ. Գնուա . «Աս կերպ խօսուածքը  
որնական ոճ մը ունի և դիւրաւ կ'հաս-  
նկըցուի . քանզի ամէն ազգի մէջ «մեղ-  
քէ տրուիլ» կամ «բարոյական աղտե-  
ղութենէ մաքրուիլ» ըսելով չ'իմացուիլ  
ըրով եղած լուացումը . այլ այնպէս կ'ըս-  
ուի . ինչո՞ւ որ ջուրն է գլխաւոր տարրը  
ու նշանակ մաքրութեան . և այսպէս ան  
ըսուածքը «նորէն ծնանելու աւագանին  
ձեռօքը» կարելի է որ մկրտութեան բը-  
նաւ չ'վերաբերիլ . բայց միայն կ'նշանա-  
կէ «նորէն ծնանելու մաքրութիւնը»  
«Այսպէս նաև Յովհաննու ան խօսքը  
թէ որ մէկ մարդ մը ջրէն ու Հոգիէն  
չ'ծնանի Գոցէ մկրտութեան չ'վերա-  
բերիլ» (Երեմ. 67 — 68 .)

Հատ վսեմ եղանակ մը համարուած է  
խօսուածքի՝ Նորոգակերպեալներուն մէջ  
մէկ «գուցէ» ով՛ երկու «կարելի է» ով՛  
երեք «կրնայ ըլլալ որ» ով՛ քրիստոնէա-  
կան վարդապետութիւն մը ջրելը ու հեր-  
քելը , կամ հաստատելը . և ինչէ՞ն կ'ըլլայ  
պի՛ իրենց վրկութիւնը «կարելի է» էն



ի կախ թողելու կ'փտահանան. չ'ըլլա՞ր որ  
 «կրնայ ըլլալ որ» ով հաստատուած բանի  
 մը հակառակն ալ «կարելի է» ով հաս-  
 տատուի, կործանելով հիմնայատակ քայ-  
 քայէ «կարելի է» բառին հաստատած  
 վարդապետութիւնը. «գուցէ» իրեն ալ  
 անհաճոյ ըլլալով:

ԱՆՐԵԼԻ բառը չ'եմ յուսար որ բա-  
 ւական ոյժ ունենայ «Աւազանին ձեռօ-  
 քը» փրկուելու վարդապետութիւնը հաս-  
 կրնալու համար ամէն արարածներուն  
 իմացողութիւնը վեր ՚ի վայր շրջեցնելու .  
 ինքը այդ փաստը գործածած էր՝ երբ որ  
 ես ալ ասանկ հասկըցայ անոր միտքը.

«Աւազանին մէջ (Յանուն չօր՝ և  
 ՝Որդւոյ և չոգւոյն սրբոյ թաղուելով)  
 ՝նորէն ծնանելու ձեռքովը (մեզի փրկեց)  
 ՝և Սուրբ չոգիին նորոգելովը մեզի փրկ-  
 ՝կեց . չ'է թէ մեր ըրած արդարութեան  
 ՝գործերուն համար (մեզի փրկեց), հասպա  
 ՝իր ողորմութիւնովը (մեզի փրկեց՝ իր  
 ՝պատուիրանին հնազանդելով ջուրին մէջ  
 ՝ընկղմելնուս. )»

«Գուցէ» բառին հաստատած վար-  
 դապետութիւնն ալ ասանկ կ'ըրեմ.

«Թէ որ մէկ մարդ ջրէն (չ'ծնի, Յա-  
 ՝նուն չօր՝ և Որդւոյ՝ և չոգւոյն Սրբոյ

«ընկղմելով) Հոգիէն ալ չ'ծնի՝ չ'կրնար  
 «Աստուծոյ Արքայութիւնը մտնել. » աս  
 խօսքիս աւելի հաստատութիւն կուտայ  
 դարձացին 19 գլ. 1 — 3 համարները,  
 որոնց վրայօք վերը խօսեցանք. (Երեւ. 80.  
 142.) չ'է թէ Բողոքական ճշմարտու-  
 թեամբ «կարելի է» կամ «կրնայ ըլլալ»  
 և կամ «գուցէ» բառերէն մեկուն թե-  
 ութենէն կախուած կ'մնայ Հայկական  
 տանը ճշմարտութեան ճրագը:

Դանք մեր Լուտեր Արդարապետին.

Լուտեր. 6. Հ. «Ի՞նչ կ'նշանակէ ջուրին  
 »մէջ ան ընկղմիլը.

«Պ. Մ'նշանակէ որ հինն Ադամ որ դեռ  
 »մեր նեսիդին է, այսուհետև ամէն օր մեր  
 »կիրքերը մեռցնելով և ապաշխարելով  
 »պիտի ընկղմենք և մեռցնենք զանիկայ.  
 »ամէն մեղքերուն և ցանկութիւններուն  
 »հետ մեկտեղ և նորէն միշտ պիտի ծնա-  
 »նինք և յարութիւն առնենք նոր մարդ-  
 »մը ըլլալով, որ արդարութեան և սրբու-  
 »եան մէջ ապրինք Աստուծոյ առջևը յա-  
 »ւիտեանս յաւիտենից:

7. « Հ. Ո՛ւր տեղ գրուած է ասիկայ.

« . Պ. Սուրբն Պօղոս Հռովմայեցւոյ  
 »(6. 4) կ'ըսէ. Անոր հետ թաղուեցանք  
 »մկրտութիւնով մահուան համար, որ ինչ

”պէս Բրիտոս շորը փառքովը յարու-  
 ”թիւն առաւ մեռելներէն, անանկ մենք  
 ”ալ կենաց նորոգութեան մէջ պտըտինք:”  
 (Երեւ. 29 — 30.)

Ինչով պտըտելու ենք կենաց նորոգու-  
 թեան մէջ: ՄԱՐՏՈՒԹԻՒՆ ուլ, ուրեմն,  
 “Մկրտութիւնը ոչ դաւանութեան կնիք  
 ”է, և ոչ արտաքին նշան ըլլալու բան մը  
 ”ունի, այլ՝ Սկզբնական մեղքէ ազատու-  
 ”թիւն . (Հոով. 4.) Ներգործա-  
 ”կան մեղքէ ազատութիւն . (Գործ. 2.  
 38.) Աստուծոյ որդեգրութիւն . (Գաղատ.  
 ”3. 26.) Բրիտոսի անդամ ըլլալ . (Ա.  
 ”Վրնի. 6. 11.) Բրիտոս իր վրան հա-  
 ”գածի պէս ըլլալով Անոր հետ միանալ .  
 ”Գաղատ. 3. 27.) Եւ ճշմարտապէս և իս-  
 ”կական վերստին ծնունդ . (Յով. 3.) Եւ  
 ”յաւիտենական կենաց պատճառ . (Մարկ.  
 ”16. 16.) Չի մկրտուողը Աստուծոյ Ար-  
 ”քայութիւնը չ'կրնար մանել:” (Նոր ա-  
 դանդաց դէմ հրատարակուած մկրտու-  
 թեան ճատին մէջ. Երեւ. 36.)



Միայն սա է ընդհանուր Հայաստանեայց  
 Սուրբ Եկեղեցիին դաւանութիւնը՝ Մկր-  
 տութեան փրկագործ խորհուրդին վարդապետութեանը վրայօք, և ասկից դուրս  
 նորահնար և մտացածին վարդապետու-  
 թիւններու ոչ հաւատք կ'ընծայէ՝ ոչ  
 կ'ընդունի ոչ ալ ընդունելու է. ինչպէս որ  
 նոյն իսկ նորահնար վարդապետութեան  
 պաշտպանը մէկ «կարելի է» բառովը կը-  
 վիայէ որ իր լսածը պարզապէս ընդունե-  
 լի չ'է, երկբայական բան մըն է. ինչ  
 խելք է. Աստուածային գրոց և Եկեղեց-  
 ւոյ հաստատած վարդապետութիւնը հեր-  
 քել և «գուցէ, կրնայ ըլլալ որ» բառով  
 նշանակուած անհաստատ խօսքը իբրև  
 հաստատուն վարդապետութիւն ընդու-  
 նիլ, որոց դէմ միշտ իմ հարածատ Հայ-  
 ազգի եղբայրներու հետ Աւետարանի  
 ճշմարտութիւնովը առ Աստուած բողոքե-  
 լու եմ

1850

Faint, illegible handwriting, possibly bleed-through from the reverse side of the page.


5 2 7



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.


















4802

2013

4644